



Հ.Յ.Ղ. ԲՆԻՐԸ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BUREAU
LIBRARY

ԴԻՐՈՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1905

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak“
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԿԱՆ ԳԱԶՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ե Լ Ի Թ Ի Ա Կ Ա Ն (1904-1905)

Հայ Յեղ. Գաշնակցութեան 15-րդ տարեգարձն է: Ծանուցինք տարի է անցել այն օրերից, երբ թիւրքահայոց ազատութեան դատը հրացանների որոտումների մէջ իր առաջին քայլերն էր անում: Որքա՞ն տարբեր էին նրանք ներկայ օրերից... Մի անխուղ լաւատեսութիւն էր տիրում հայկական շրջաններում. յոյսերը վարդազոյն, սրտերը զւարթ, յաղթանակը մօտ... Թոււմ էր, թէ ահա մի քանի կռիւներ, մի քանի շառաչալի նահատակութիւններ տեղի կ'ունենան, և չարատանջ խնդիրը կը լուծւի...

Գառն, ցաւագին հիասթափութիւններ ունեցել են բոլոր ազգերը իրենց ազատագրական ճիգերի մէջ, — մենք բացառութիւն չկազմեցինք օրէնքից: Մեր հիասթափութիւնը աւելի խոր եղաւ, աւելի յարատւ. մեր թշնամին՝ աւելի վայրագ, մեր մարտիրոսութիւնը՝ աւելի ցնցող: Ոչ անբաւ արիւնը, որով ներկւեցին Հայաստանի լեռներն ու ձորերը, ոչ հերոսանահատակների փառահեղ բոյլքն ու կռիւների անվերջանալի շարքը՝ չհասցրին մեզ բաղձալի վախճանին, — և տանուհինք տարւայ անդուր փոթորկոտ գործունէութիւնից յետոյ, այսօր մենք տեսնում ենք, որ դեռ պէտք է քայլել, թերեւ շատ քայլել...

Նախորդ տարւայ փորձութիւնները մի անգամ ևս շեշտեցին մեր առջև այդ անողոր անհրաժեշտութիւնը: Յեղափոխական տեսակէտից մի եզակի թւական էր այն լի յոյսերով ու յոյսերով: Երբէք հայի ռազմական կորովը այնքան մեծ չափերով չէր արտայայտւել իր խորութեամբ, թէ տարածութեամբ: Երբէք Մեծ-Հայքը — դարերով սրորւած մի ստրուկ ու զաղիր գոյութեան ծոցում — վկայ չէր եղել այնքան ուժգին ըմբոստացումների, այնքան յանդուգն, — դիւանագէտի լեզուով իսկ հռչակած — ճակատամարտերի: Գաշնակցութիւնը անօրինակ ճիգեր թափեց՝ կռուող ժողովուրդին գէնք ու դրամ հայթայթելու համար. նա իր ուժերի մեծ մասը տւեց թէ երկրի մէջ, թէ արտասահմանում, եւրոպական դիպլոմատիայի առաջ, — և այս անգամ ևս նրա յոյսերը չարդարացան... Նրա դիմաց, ըստ առաջնոյն, ցցեցին ապառաժի պէս հայ քաղաքական կեանքի երկու անողոր գործօնները — թիւրք կառավարութիւնը իր սովորական ճնշումներով, և դիւանագի-

տութիւնը, մանաւանդ ռուսականը, իր ցինիկ անտարբերութեամբ...

Սոսկալի իրականութիւն, անտարակոյս: Եւ այդ ցաւոտ իրականութեանը ամէնից շատ գիտակից են նրանք, որոնք ամէն օր ու ամէն վայրկեան ապրում են ժողովուրդի հետ, բաժանում են նրա վշտերը: Մի կազմակերպութիւն, որ ձգտումն ունի ժողովուրդական դատը վարելու՝ ինքն իր մահաւան դատավճիռը կ'արձակէր, եթէ առաջ տարւէր լոկ յեղափոխական յափշտակութեամբ, առանց գիտակցելու դրութեան պահանջները, առանց յարմարելու այդ պահանջներին:

Ի՞նչ անել, ահա այն հարցը, որ նորից հնչում է թերահաւատների շրջանում: Գոտարք լինել ձեռք քաշել կռուի ասպարէզից, թողնելով ժողովուրդը իր ճակատագրին... Դա մի ելք է, հաճելի նրանց, որոնք սիրում են վճուել կնճուտ, կենսական խնդիրները ժողովուրդից հեռու, նրա կեանքին անտեղեակ: Բայց դա մի ելք է, որ յեղափոխականի աչքում հաւասար է դաւաճանութեան: Յեղափոխական կազմակերպութիւնը կարող է ինքզինքը մնանկ յայտարարել, հանդիսաւոր կերպով ժխտել այն պայմանները, որոնք իրան ծնունդ են տւել և որոնք յարատւում են, տաշաբախտաբար, միշտ աւելի ու աւելի ծանրանալով: Այդ պայմաններն են՝ հազար անգամ կրկնւած ու դարձեալ կրկնելի իրողութիւնները — հայի հինաւուրց և ամենօրեայ ճգնաժամը, նրա ոչ միայն բարօրութեան, այլև Փիղիբական գոյութեան սպառնացող, ամբողջ աշխարհին յայտնի՝ սիստէմատիքական բնաջնջման վտանգը, որ առաջ է տարւում թշնամու կողմից մի սարսափեցնող վճուականութեամբ: Դա մի սոսկ Փրագ չէ, ագիտացիական միտումներով շեշտւած, այլ մի ահաւոր իրողութիւն, որ ամէն օր պերճախօս փաստերով հաւաստում են մեզ թիւրքահայաստանի մեր ընկերները:

„Լաւ խմանալով, որ դիմադրութեան չափի հանդիպէ, կառավարութիւնը եռանդով վերսկսում է իր ճնշումները. կառավարութեան վտայ զօրքը կողոպուտի արշաւանք կազմեց, համարձակ, անվախ, վստահ լինելով, որ հայդուկի գնդակները չափի ճարակեն նրա շարքերը“ — այսպէս է գրում իր վերջին նամակում Վասպուրականի մեր թղթակիցը: Կարդացէ՛ք նաև „Գրօշակի“ ներկայ համարում գետեղւած մեր նախկին բանտարկեալ ընկերոջ նամակը, ուր դառն շեշտերով նկարագրւում է

Փորք-Հայրում կատարող հայկական ամենօրեայ ողբերգութիւնը...

Այո, և այդ յարատե բնաջնջման կօշմարն է, որ արտադրում է հայի հայրենիքում հարիւրաւոր ըմբոստներ, ճշմարիտ յեղափոխականների շարքեր, որոնք հրապարակ են նետում կուսակցական տենչով, ետում են կատարութեամբ և ցուրտ գերեզմանի մէջ են միայն գտնում իրենց անգործութիւնը...

Այ, — մենք չենք, որ պիտի յուսահատենք: Տանուհինգ տարւայ գուռ փոթորիկներից ու հսկայական զոհողութիւններից յետոյ չէ, որ մենք մեր սուրբ պիտի դնենք պատենանում. և ներկայ խորհրդաւոր պատմական օրերում չէ, որ պիտի մատնենք անարգ յոռետեսութեան...

Կուրք Տաճկահայաստանում կարող է փոփոխել իր ձևերի մէջ, բայց երբէք ընդհատել: Եթէ Եւրոպան իսպառ անընդունակ է յայտնում «ապահովելու հայ ազգաբնակչութիւնը քրդերից ու չեքէզներից», — ապա հայ յեղափոխականների վրայ է ընկնում այդ դժուարին, բայց և սրբազան պարտականութիւնը: Գործող մարմինը կը շարունակէ պայքարել ամէնուրեք թիւրքահայերի դատը, կոչ անել սմբողջ հայութեան, աճեցնել իր նիւթական ու բարոյական ուժերը, հաւաքել իր դրօշակի տակ բոլոր զգայուն, ըմբոստ տարրերը և ուղղել նրանց դէպի թիւրքահայ ժողովրդի ինքնապաշտպանութեան ու ազատութեան գործը:

*

Տրամադրութիւնը բարձր էր Ռ ու ս ա հ ա յ ա ս տ ա ն ու մ: Եկեղեցական կալաճանների գրաւման առթիւ սկսած շարժումը առաջ գնաց: այնտեղ դաւադրութիւնների ու տէնօրական փորձերի ձևով: «Դաշնակցութիւնը» գործեց մի շարք քաղաքական սպանութիւններ, որոնք ստիպողական պահանջ էին դարձել և կազդուրիչ տպաւորութիւն գործեցին վրէժխնդրութեամբ այրող ժողովրդի վրայ: Խոշոր դահիճներից՝ Անդրէյի, Բօգուսլաւսկի և Բըկով ընկան տէնօրիստի հարւածների տակ և բազմաթիւ այլ պաշտօնեաներ — ոստիկանապետներ, պրիստաւներ և ըն — շանթահարւեցին հայոց գաւառներում: Սարսափը կատարեալ է կառավարչական շրջանների մէջ, տեղ-տեղ բիւրօհրատիան de facto անդամալուծւում է, չէզոքանում և ոչ միայն ահով ու պատկառանքով է նայում «Դաշնակցութեան» աներևոյթ կօմիտէների վրայ, այլև նրանց ձեռքն է յանձնում շրջանի ղեկը: Մեծ է «կօմիտէի»

հմայքը ամէն տեղ, և նա աւելի ու աւելի է աճում միապետութեան ճգնաժամի ու ընդհանուր Ռուսաստանի յեղափոխական խմորման հետ:

Հ. Յ. Դաշնակցութեան երրորդ ընդհանուր ժողովը, որ տեղի ունեցաւ անցեալ տարւայ սկզբում, ներառեց Վովկասում արծարծւած կուրք մէկ որոշումով, որով նա պաշտօնապէս ստանձնում էր այդ կուրք վարելու դերը: Ընդհանուր ժողովը այդ և ուրիշ որոշումներով կամեցաւ շեշտել որ Ռուսահայոց շարժումը պատահական ու վաղանցուկ մի երևոյթ չէ, այլ ընդհանուր, հակապետական շարժումների հետ կապւած մի օրգանական իրողութիւն, որ ունի իր խոր, տեւական պատճառները և որի համար յունիսի 12-ի կայսերական ուկազը սոսկ շարժառիթ էր: Ռուսի և կազմակերպութիւնը հարկ համարեց իր Բարձրագոյն մարմնի բերանով համար աշխարհի քարոզ կարգաւ կովկասում գործող ուրիշ կազմակերպութիւնների հետ, որոնք թէև տարբեր իրենց ծրագիրներով, բայց բոլորն էլ նպատակ ունեն կուրք մղել տիրող ռէժիմի դէմ:

Այդ նոյն նկատումով էր ղեկավարւում «Դաշնակցութիւնը», երբ արձագանք տւեց Ֆինլանդացի յեղափոխականների կոչին և մասնակցեց Պարիզում գումարւած Ռուսաստանի այլևայլ մարտական կազմակերպութիւնների խորհրդատուներին, մշակելու համար համերաշխ գործակցութեան մի նախագիծ: Դա մի անցք էր Ռուսաստանի ստրուկ ազգերի տարեգրութեան մէջ և մի խոշոր քայլ դէպի առաջ: Յեղափոխական կուսակցութիւնները դաշն էին կուրք հէնց այն ժամանակ, երբ թշնամին անասելի շիթութեան մէջ յետ ու յետ էր մղւում ներքին ու արտաքին հարւածներից:

Որքան աւելի է զարգանում Ծայրագոյն Արևելքի դրաման, այնքան աւելի է սաստկանում ներքին տագնապը, այնքան աւելի են իրարու մօտենում յեղափոխական ուժերը, այնքան աւելի յուսալի է դառնում ապագան...

Չւարթ օրեր են... Մայրաքաղաքներն ու գաւառները, «Մայր-Ռուսաստանն» ու հեռաւոր Ծայրերը շարունակ ծփում են ալէկոծութեան մէջ: Ռէակցիայի դաժանադէմ ներկայացուցիչները սկսում են արդէն փախուստ տալ որոտացող յեղափոխութեան ալիքների առաջ: Դա ժամանակի նշանակն է: Եւ դա հաստատուն գրաւականն է բռնապետութեան մօտալուտ անկման, այն անանուն բռնապետութեան՝ որը մի տեսակ տիեզերական Բաստիլ է դարձել ազատատենչ ժողովուրդների համար և որը իր բոլոր ահարկու թափով ծանրացած է նաև բազմատանջ հայութեան ճակատագրի վրայ՝ Անդրկովկասում, թէ Տաճկաստանում:

ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԹՈՒՍԱՏԱՆՈՒՄ

ԵՐԿՈՒՆՔԻ ՍԿԻԶԻԸ

Արիւն Պետերբուրգի փողոցներում, բողոք Չմեռային պալատի դիմաց, ընդհարում զօրքի և ժողովրդի միջև, ցասման կոչ տանջւած շրթունքներից:

Կորչի՛ միապետութիւնը:

Սպառնական այդ կոչը, որ դեռ երէկ հնչում էր Ղեհաստան, Ֆինլանդիա, Աոփկաս, հուժկու աղմուկով անցաւ դէպի կենտրոնը, ուր նա լուծեան էր մատնւած, խտացաւ բազմատանջ ոռուս ամբոխի կրծքի մէջ և պայթեց բռնապետութեան տաճարի դիմաց, որ Չ մ ե ո ս յ ի ն պ ա լ ա տ անունն է կրում, դարեւոր արձանը մահաշունչ ցարիզմի:

Արձանը դեռ կանգուն է, բայց ինքը ցարը՝ տկարամիտ Նիկոլան, մատնւած անյայտութեան: Աստիճակի-Օստրովից եկած առաջին ձայնը ստրստի տարածեց օգոստոսի առ քաջերի վրայ: Ցարը փախաւ մայրաքաղաքից և ապաստանեց Ցարսկոյէ-Սելո: Թագակիր «հօր» և ժողովրդի միջև կանգնեց դարեւոր պատնէշը՝ անխիղճ և անբան զօրքը՝ սուրը պատեանից հանած, պատրաստ յարձակելու եղբայր-ժողովրդի վրայ:

«Հայր, լսի՛ր մեր աղերսը»...

Խոնարհ, որդիական հեզութեամբ խմորւած այս խօսքերով սկսեց իր բողոքը, այս անգամ փարաջաւորի ղեկավարութեան տակ, մայրաքաղաքի բաներութիւնը, որ մի փափագ միայն ունէր — տեսնել ցարի երեսը, մի նպատակ միայն — նրան յայտնել իր անհուն վշտերն ու անբաւ ցաւերը: Բայց մի՞թէ ցարի երեսը՝ արհամարեղի, իրաւազուրկ ամբոխի համար է օժւած և կամ մի՞թէ գոհնակ բաներութեան կեզտոտ ոտքերի համար են գեղազարդւած պալատի սանդուխքները, որոնցով այդ ամբոխը դէպի գահը բարձրանալու յանդուգն իղձն ունի...

Ո՛չ և ո՛չ, գոչեց նորին մեծութեան հաւաքական բերանը, և կ ա Ր Գ ա պ ա հ Ո Ւ Թ Ե Ա Ն վեհագոյն օրէնքը դարձեալ մի անգամ անսանձօքէն գլուխ բարձրացրեց արքայանիստ քաղաքի փողոցներում, — դիակներ, աւելի քան երկու հազար, արիւն և արտասուք, նոյնքան առատ, որքան սուրին ու մտրակը. աղբխարչ տեսարաններ, արժանի Համիդեան անարգ անւան...

Արիւն, բայց ոչ նահանջումն, արտասուք, բայց ոչ յուսահատութիւնը Եւ արեան ու արտասուքի միջից՝ շարունակում է հնչել մարտի գոչը, յեղափոխական գոռ հրաւերը, որ փրփրած ալիքների նման գնում, տարածւում է հեռու և հեռու: Ընկած շարքերին՝ յաջորդում են նորերը: Շրջականներից բաներական և գեղջկական զինւած խմբեր են դիմում մայրաքաղաք: Ցարը հին

Թագստից դէպի նորն է ապաւինում: Մայր-Թագուհին՝ մշտական սիրուհին բոլոր արկածանդիներների, մի պալատից միւսն է փախչում: Պօքեղօնօսացելը «հիւանդ» անկողին է մտել: Մինիստրները «տանը չեն», և սարսափը դարձել է համատարած, ամենազօր Թագաւորը ծակամուտ Թագաւորողների...

Սարսափի շանթը այլևս արտասահման ապաստանած աքսորականներից չէ գալիս և ոչ էլ համալսարանական երիտասարդութիւնից միայն: Համաժողովրդական է նա: Բաներականութիւն, Գապօնի, Տուբեցկոյ, զէմսովո, այլևայլ ազգեր, ազատամիտ բանակ, սօցիալիստական շրջաններ — բոլորն էլ միացած են դժգոհութեան և զղանքի շաղկապով, ուղղած գահին, ցարիզմին, յանուն մեծագործ յեղափոխութեան:

Երկունքի սկիզբն է այս:

«Նորածինը» արիւն է պահանջում:

Մի՛ երկնջի՛ր արիւնից, ոռուս ժողովուրդ, տանջանքի և լուծեան դարեւոր հերոս:

Եւ դու, Ֆինլանդիա, օբինականութեան չգնահատած երկիր, Թափ տուր քեզանից հեզութեան փոշին և ձեռք առ մարտական սուրը:

Իսկ դու Ղեհաստան, յեղափոխութեան խնկելի որրան, հաւատարիմ՝ քո անցեալ մեծութեան, առաջ անցիր. սիրտ առ և սիրտ տուր: Քո օրինակին շատերն են կարօտ:

Եւ դու Աոփկաս, երկիր ազգերի և ազանց, մոռացիր պառակտման օրերը և ազգմիկի ուժով՝ ըմբոստութեան նոր կոչ արձակիր:

Թող կորչի՛ ցարիզմը:

Ահա հնչում է որոտը յեղափոխական շեփորի: Ականջ դրէք, դուք, ցարի անբախտ հպատակներ, և գնացէք այդ կոչի յետևից վստահ, լին հաւատով, մարտական կրակով բռնկւած:

Յեղափոխութեան տօնն է այսօր:

Պետերբուրգից և Ռուսաստանի այլ քաղաքներից հեռագիրը ամէն ժամ տարածում է յուզել լուրեր: Յեղափոխական շարժումը ընդլայնւում է քայլ առ քայլ: Յոյցեր և ընդհարումները, բայց մայրաքաղաքից, արդէն սկսել են Մոսկվա, Կիեւ, Օդեսա, Կիշնեւ, Աիլնա — Ֆինլանդիան ապստամբական վիճակի մէջ է: Ղեհաստանը շարժւում է լուր կայ, որ Բագել բաներական ցոյցը վերսկսած է, քաղաքական գոյնի տակ: Ամբողջ Արևմտեան Եւրոպան բռնկւած է ցարիզմի խնդրով: Ֆրանսիա, Իտալիա, Միացեալ Նահանգներում և այլ տեղեր բողոքներ են սկսւած ցարի զինւորների դադանային արարքների դէմ: Կազմակերպւում են բողոքի և համակրութեան միտինգներ: Սօցիալիստ մամուլը հրաւեր է կարդում քաղաքակիրթ Եւրոպային՝ աջակցել նորաբոյս յեղափոխութեան:

«Իրօշակի» մերկայ համարից ամմիջապէս յետոյ՝ լոյս կը տեսնեն փոքրիկ «Յաւելաձմեր», մելլուած ոռուսական շարժման և օրւայ դէպքերիմ:

«Գ Ա Ր Ո Ւ Ն Ն» Ա Ն Ց Ա Ի

Մոսկվա, 20 դեկտեմբերի

Նեվայի ավերումը գեպքերը յաջորդում են իրար գերբնական արագութեամբ.— սահմանադրութեան երազ և դեկտեմբեր 25-ի մանիֆէստը, մամուլի ազատութեան լուրեր և Պօբեդօնօսցեվի ուղերձը, Միրսկու գերիշխանութիւնը և զեմսովօներին ուղղած բարձրագոյն յանդիմանութիւնը, «գարնանաբեր» մինիստրի հրաժարականի ձայնը և Վիտտէի վերադարձը...

Գարնալ յուսախաբութիւն, գարնալ հին երգեր ուս ժողովրդի անպատրաստութեան մասին, որ այսքան տարի և այսքան տասնեակ տարիներ յետ մղեց ըէֆօրմների նւազագոյն ծրագիրները, այդ անշան յոյսը՝ համբերատար ժողովրդի...

«Գարունը» անցաւ նոյնիսկ այն չափաւոր, կցկտուր, արմատական բնոյթից զուրկ ծրագիրը, որի մեծագործաւետաբերը եղաւ Սվետոպօլկ-Միրսկին, համարեց վաղաժամեայ, վտանգաբեր, ենթարկեց պալատական կուսակցութեան անէճքին, մեծ-իշխանների կրակոտ դատապարտութեան և մինչև իսկ լուսկեաց «նիկոլայ 11-ի բարձրագոյն հաճութեան, նա ուրեմն պիտի գնայ, կամ գուցէ արդէն գնացել է իր վաղանցուկ յոյսերը ողբալու պետական դիւանատան այն անթափանց դիւանատնում, ուր այնքան հանգստորէն պառկած են Լօրիս-Մէլիքովի «սահմանադրութիւնը» և Միլիտինի «զեկուցագիրը»:

Խեղճ զեմսովօներ, գրաքննութեան ճանկերում հիւժւած խեղճ մամուլ: Պատանեկան որպիսի բերկրանքով աւետեցին նրանք «գարնան» կենդանարար հովերը, որոնք պիտի յաջորդէին քաղաքական խստաշունչ ձմրան, և որքան սպասելիքներ տարածեցին նրանք ահագին պետութեան բոլոր անկիւններում, այն բորբոսնած խաւերում, որոնք միապետութեան տենչացած «հաւատարիմ հպատակներին» աշխարհն են կազմում: Հսկայական այդ պատրանքը, քաղաքական այդ մեծագոյն յուսախաբութիւնը՝ անկասկած, վերին աստիճանի ողբերգական, թող խրատ լինի, մի նոր դաս նրանց համար, որոնք չնրաււած պատմութեան անթիւ և անհամար փորձերից, տրամադրեցան կարծելու, որ Աւետեաց երկիրը 2մերային պալատի մէջն է, և ժողովրդական փրկութիւնը՝ միապետի գրէի ծայրին...

Միապետը զիջանել չէ ուզում: Նոյնիսկ Պօրտ-Արտիւրի անկման հանդէպ՝ պալատական օլիգարխիան շարունակում է իր անողոր կուրը «գարնան հովերին»: Եւ եթէ «րոպէն» շատ երկիւղալի չլինէր, Միրսկուն կը յաջորդէր ոչ թէ Վիտտէ, որ սպանւած և հրաժարած մինիստրների շարքում միջին տեղն է բռնում, այլ մի ուրիշը Պօբեդօնօսցեվի դպրոցից, Ալէքսէեվ, Կօկօվցեվ, Մուրաւլիով, իբրև հաւատարիմ շարունակող Պլէվէեան աւանդութիւնների...

Հնարագէտ Վիտտէ, նախկին ղեկավարը բոլոր գործերի, երևի կը շարունակէ խաբ տալ հասարակաց կարծիքին, կը փորձէ վերադարձնել Ռուսաստանը Լօրիս-Մէլիքովի օրերին, 80-ական թւականներին, որ Ալէքսանդր 111-ի ամպամած թագաւորութեան հանդէպ լուսաւոր կէտ նկատելու արտաքին բոլոր նշաններն ունի:

Սակայն այդ 25 տարի առաջ էր: Քառորդ դարայ կեանքը նոր պահանջներ յարուցեց, նրբացրեց Ռուսաստանը կազմող բոլոր ժողովուրդների քաղաքական ճա-

շակն ու ախորժակը, լայնացրեց այն ծրագիրները, որոնք արդի յեղափոխական-դիմադրական տարրերի հաւատոյ հանգանակն են կազմում, նրանց գոհացման միակ պայմանը:

Անցաւ զաւելչտական, շինծու, խաբուսիկ «գարունը»: Եւ այժմ պիտի գայ իսկականը, նա, որի գալուստը յայտարարուում է փոթորիկներով, կայծակ ու որոտով, ամպերի ահեղադորդ գոռոցով: Մինչև այժմ լսածները այդ գոռոցի նախանշաններն են միայն.— դեռ անհրաժեշտ են նոր Սագօնօվներ, գործադուլների նորանոր շարքեր, աւելի ուժգին Պօրտ-Արտիւրներ, քաղաքական ըմբոստացման միահամուռ մի պայթիւն, գրոհ պալատի դէմ, գուցէ և մի ողբերգութիւն գահի շուրջը...

Շ Ա Ր Թ Ո Ւ Մ Ն Ե Ր Լ Ե Ն Ա Ս Տ Ա Ն Ո Ւ Մ

Լեհական սոյիալիստ կուսակցութեան օրգան «Przedswit»-ի խմբագրութիւնը ուղարկել է մեզ հետևեալ տեղեկագիրը՝ Լեհաստանի վերջին անցքերի մասին:

Կրակով, 25 դեկտեմբեր

«Այս շաբաթ սրանից առաջ կառավարութիւնը շարժման մէջ դրեց պահեստի զինւորներին (ըէզերվիստ) ուսական Լեհաստանի մէկ մասում,—19 շրջաններում (ընդամենը 81 շրջան է): Սօց. կուսակցութեան դիմադրութիւնը և պահեստի զինւորների խմբովին փախչելը՝ չկարողացան արգելք լինել կառավարութեան այդ քայլին, այն պատճառով՝ որ զօրաշարժի հրամանը կատարեց իր հրատարակումից անմիջապէս յետոյ և ժամանակ չեղաւ կազմակերպելու դիմադրութիւնը: Ըէզերվիստների թիւը 110,000 է, որոնցից առնւազը 1/10-ը աջողեցին փախուստ տալ: Մօտ 40,000 հոգի հաւաքեցին դրօշակի տակ:

«Մինչև օրս նոր զօրաշարժ չ'եղաւ, այնպէս որ արդիւնաբերական մեծ կենտրոնները, ինչպէս Վարշաւա, Լօդձ, մնում են տակաւին անձեռնմխելի. բայց կառավարութիւնը արդէն պատրաստութիւններ է տեսնում արշաւելու հարաւային Լեհաստանի մի քանի նահանգների վրայ:

«Այս նոր պատուհասի հանդէպ՝ Լեհ Սօց. Կուսակցութիւնը որոշեց ընդունել մի նոր տաքտիկ: Նա հրահանգում է ազգաբնակչութեանը՝ կրաւորական, բայց և վճռական դիմադրութիւն ցոյց տալ իշխանութիւններին: Այդ մտքով հրատարակւած մի պրօկլամատիօն տարածեց 30,000 օրինակներով: Քանի որ, ինչպէս փորձը ցոյց է տւել, զօրաշարժը կատարուում է մեծ անկարգութեան մէջ, ուս թուլամորթ ու ապականւած զինւորական վարչութիւնը հազիւ թէ կարողանայ գործ տեսնել և այդպիսով զօրաշարժը կը դառնայ անհնարին:

«Հակամիլիտարիստական այդ շարժումը ուժեղացնելու համար՝ կուսակցութիւնը ցոյցեր է կազմակերպում փողոցներում:

«Այդպիսի մի ցոյց կատարեց, նոյեմբերի 12-ին, Բատրօվից ա կոչուղ արդիւնաբերական կենտրոնում: Ժամը 6-ին, գործարանները փակւելուց յետոյ, մօտ 100 հոգի կազմեցին թափոր և պարզեցին կարմիր դրօշը, հետևեալ մակագրութեամբ. «կորէի՛ զօրաշարժը», «կեցցէ՛ Սօցիալիստ կուսակցութիւնը»: Ապա թափորը շրջեց փողոցները, երգելով լեհական բանւորական հիմնը՝ «Կարմիր

Գրօշակ: Ցոյցը տեւեց 20 րոպէ. ոստիկանութիւնը թագնուում էր. ոչ ոք չձերբակալեց: Նոյն ամսի 24-ին տեղի ունեցաւ մի երկրորդ ցոյց, որին մասնակցում էին 500 հոգի. այդ ցոյցը տեւեց կէս ժամ: Ոստիկանութիւնը դարձեալ զգուշութեամբ թագ կացաւ. միայն մէկ ոստիկան փորձեց խլել դրօշակը, բայց նրան էլ քշեցին բռունցքի հարւածներով: Նման ցոյցեր կազմակերպւեցին մօտակայ քաղաքներում: Ս մ է լ օ վ ու մ կօրտէժը կազմեց 400 մարդուց: Մի ոստիկան անզգուշութիւն ունեցաւ ատըրձանակ արձակելու ցուցարարներին վրայ. ամբողջ ընկաւ նրա ետեւից, քարերի հարւածներով քանդեց նրա տունը և պատուհանից մի քանի տասնեակ անգամ որոտացրեց ատըրձանակները:

Մի ուրիշ ցոյց աւելի լայն ծաւալով, մի քանի հազար հոգու մասնակցութեամբ, տեղի ունեցաւ նահանգական Բ ա տ օ մ քաղաքում, դեկտեմբերի 4-ին: Այնտեղ ևս ատըրձանակներ կրակեցին ոստիկանութեան վրայ: Մի քանի հոգի միայն ձերբակալուեցին:

Գեկտեմբերի 4-ին ցոյց եղաւ Ս օ ս ն օ վ ի ց ու մ: Մօտ 1000 մարդ, կարմիր դրօշակը պարզած, անցան քաղաքով: Հետեւանքը—երկու պրիստաւ և երկու ոստիկաններ վիրաւորուած: Ոչ մի ձերբակալութիւն:

Արիւնահեղ ցոյցերը շարունակուում են Լեհաստանում: Գաւառական խոշոր քաղաքներից՝ Բարոմի մէջ միայն կառավարութիւնը փորձ արեց կանչել պահեստի զինւորներին: Քաղաքը նախօրօք լցւեց զօրքով, որի մի շուկատը պահպանում էր ռուսական եկեղեցին: Անցորդները ենթարկուում էին խուզարկութեան ու ծեծի: Գեկտեմբերի 24-ին, երբ կանչուած լեհ զինւորների մի մասը պիտի ձանապարհէր դէպի Մանջուրիա, ուժանակային ուժերով քանդուեցին ձանապարհի վրայ ձգուած երկու կամուրջները. երկաթուղային հաղորդակցութիւնը դադարեց: Լուրը մեծ ցնցում առաջ բերեց լեհ ազգաբնակչութեան մէջ, պահեստի զինւորներից շատերը, խրատուուած, փախան, ուրիշները բնաւ չներկայացան կօնտրօլին: Նոյն օրը երեկոյան տեղի ունեցաւ արիւնահեղ ընդհարում. հազարաւոր ամբողջ եկեղեցիներից դուրս գալով, հաւաքւեց օրոշեալ փողոցի մէջ, թափոր կազմեց ու առաջ անցաւ «Վորչի՛ ցարիզմը և կեցցէ՛ Լեհաստանի անկախութիւնը» կոչելով: Ցուցարարները միաժամանակ օգի մէջ կրակեցին, ցոյց տալու համար, որ զինուած են: Զօրքը, երկար զգուշութիւններից յետոյ, յարձակում գործեց: Այն ժամանակ ցուցարարները իսկապէս կրակեցին և 26-րդ գ ն դ ի հ ր ա մ ա ն ա տ ա ր ը մ ի ս պ ա յ ու մ ի ժ ա ն դ ա ր մ շնչասպառ գետին գլորւեցին: Մէկ հոգի էլ սպանւեց ժողովոցից: Ցոյցը վերջացաւ. զօրաշարժը կատարուում է այնուհետև մեծամեծ դժարութիւններով, զինւորները չեն ներկայանում: Գրգռոււմը հետզհետէ սաստկանում է ազգաբնակչութեան մէջ:

Գրեթէ միևնոյն ժամանակները ցոյցեր ու ընդհարումներ տեղի ունեցան և Լօձում ու Զափերաձում, ուր ցուցարարների մեծ մասը բանտարկւելով՝ ժողովուրդը— թուով 3,000 հոգի—գրոհ է տալիս դէպի բանտի շէնքը, քանդում է պատերը և ազատում բանտարկեալներին... Լօձում ցուցարարները սպանել են երկու սերժանտ, մէկ կօշակ:

Վ Ր Ա Ս Տ Ա Ն Ի Դ Է Պ Ք Ե Ր Ը

Արաստանում ևս տեղի ունեցան լուրջ յուզումներ՝ զինւորակոչի առիթով: La Georgie-ի խմբագրութիւնը հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդում մեզ:

Արացի յեղափոխականների հրահանգով՝ երկրի բազմաթիւ շրջաններում այս տարի արձագանք չուէին զինւորակոչին:

Եւ է վ ս ու ը է թ ի ա յ ու մ (Թիֆլիսի նահանգ) ոչ մէկը նորակոչներից չէ ներկայացել օրօշուած օրը: Կօշակները գնացել են բռնի բերելու, բայց զինուած ժողովուրդը յետ է քշել նրանց:

Գ ու ը ի ա յ ու մ (Քութայիսի նահանգ) երբ կօշակները գնացել են փնտռելու ըմբոստացող նորակոչներին, ժողովուրդը ցոյց է արել, պարզելով կարմիր դրօշակը. ապա դպրոցից առնելով նիկօլայ 11-ի պատկերը, ցուցարարները պտտեցրել են նրան գլ ու խ ն ի վ ա յ ը: Տեղի է ունեցել ընդհարում, սպանւել ու վիրաւորւել են շատերը:

Ք ու թ ա յ ի ս ու մ, նոյեմբերի 19-ին զինւորակոչի օրը, ժողովուրդը խմբել է փողոցներում, կարմիր դրօշակներով և «կօրչի՛ պատերազմը» աղաղակներով:

Բ ա թ ու մ ու մ, դեկտեմբերի 10-ին, նորակոչները հաւաքւել են, բայց վրաց կօմիտէի յորդորով՝ հրաժարւել են գնալ. ոստիկանութիւնը միջամտելով, առաջացել է կռիւ, որ տեւել է ամբողջ երկու ժամ:

Բ Ա Ն Ի Ո Ր Ա Վ Ա Ն Ծ Ա Ր Ժ Ա Ի Մ
Բ Ա Գ Ի Ո Ւ Մ

Վոլկասեան նաւթային քաղաքը, որ մի տարի առաջ հսկայական գործադուլի թատր եղաւ, նորից յուզուած է բանւորական ուժգին շարժումով: Աշխատակորների արդար պահանջները՝ միացած քաղաքական ընդհանուր դժգոհութեան, որ հաւասարապէս լցրել է հայի, հայի, վրացու, թիւրքի սիրտը, միեցին բանւորներին դէպի նոր ցոյց և դէպի ընդհանուր բողոք:

Գործադուլը սկսեց գեկտեմբերի 13/26-ին, և անսովոր արագութեամբ տարածւեց երկք գլխաւոր կէտերում—Բալասանի, Բիբի-Էյբաթ և Սեւ-քաղաք: Սպիտակ քաղաքն էլ ազատ շմաց: Ինչպէս առաջ, այս անգամ էլ հեռախօսային հաղորդակցութիւնը կտրուց, գործարանները կանգ առան, ձիաքարը դադարեց երթեկեկելուց, նոյնիսկ լրագիրները անկարող եղան լոյս տեսնել:

Եւ աշխատանքի ընդհանուր մեղեդութեան միջոցին, ինչպէս միշտ, հրապարակ եկաւ կօշակների վաշտը, զինուած և հեծեայ, լեցած անսահման կատաղութեամբ դէպի բանւորները: Հակառակ յեղափոխական մի քանի մարմինների նախազգուշացման, ոստիկանութիւնը դիմեց բռնի, զինուած ուժին, և ընդհարումը դարձաւ անխուսափելի:

Գործադուլի մանրամասները հաղորդում ենք ներքեւ, մի յատուկ թղթակցութեան մէջ: Շտապում ենք շեշտել այն բերկրալի համերաշխութիւնը, որ ներկայ գործադուլի վերաբերմամբ ցոյց տուցին յեղափոխական զանազան մարմինները: Առաջ ենք բերում մի քանի պրօկլամատիւններ հրատարակւած:

I

Հ Ա Յ Բ Ա Ն Ի Ո Ր Ա Ն Ե Ր Ի Ն

Հ. Յ. Գաշակցութեան Ինքնապաշտպանութեան կօմիտէն միանգամայն համակրելով բանւորական ամէն մի շարժման, նոյնպիսի համակրութեամբ վերաբերուում է նաև ներկայ տեղական գործադուլին: Ուստի նա վերցնում է իր վրայ այդ

բանւորական դատի կազմակերպումը և պաշտպանելու է բանւորական անտեսական շահերը ամէն միջոցներով, նպաստելու է նրա դատի դրական վճռումներ:

Իսկ իր բանւորներին առաջարկում է, իբրև յաջողութեան կարևորագոյն պայման, լինել համերաշխ բոլոր բանւորների հետ առանց ազգութեան և կուսակցութեան խտրութեան:

Բանւոր դասակարգի անունով մինչև այժմ այլ կուսակցութիւնների կողմից պահանջների հետ ընդհանրապէս համաձայն չլինելով՝ աւելացնում է կուսակցութեանս սղուն յատուկ պահանջներ:

Այսպիսով բանւորութիւնը պահանջելու է. —

1. Ց-ժամեայ աշխատանքը:
2. Պայմանագրային դուրս աշխատանքի վերացումն:
3. Եւրահարթ չընդհատուող աշխատութիւնների համար:
4. Սովորական դիշերային աշխատանքների վերացումն:
5. Տօների նախընթաց օրը աշխատանքը դադարեցնել ժամը 2-ին:
6. Ըաբաթուայ մէջ մէկ օր ազատ:
7. Կապալով և կապալառուների միջոցով վերջրած աշխատանքները վերացնել:
8. Իւրաքանչիւր դարբին աշխատում է մի քուրայի վրայ և իւրաքանչիւր խոռատ (տօկար) մի դաղդայի վրայ:
9. Վարձատրութեան աւելացումը առնուազն 25 տոկոսով: Նորավարձ բանւորը ստանում է նոյնչափ, որչափ նրանից արձակածը:
10. Աշակերտի օրավարձը լինելու է առնուազն 70 կօպէկ:
11. Արհեստաւորը վեցօրեայ աշխատանքի համար ստանալու է եօթ օրւայ վարձ:
12. Աշխատութեան համար դուրս ուղարկւած բանւորը ստանալու է մէկ ու կէս օրավարձ:
13. Բանւորները հիւանդութեան ժամանակամիջոցում ըստանալու են լրի վարձատրութիւն:
14. Բոլոր բանւորները անպայման բժշկւելու են նախարդիւնաբերողների խորհրդի հաշուով:
15. Մահացած կամ վնասուած բանւորի համար տրւում է վարձատրութիւն նոյն չափով, ինչ չափով ստանում էր ինքը բանւորը:
16. Աշքի առաջ ունենալով պետութեան կողմից ձեռնարկելը բանւորական ապահովագրութիւնը, պահանջելով, որ անպայման լինի արդիւնաբերողների հաշւից:
17. Ամէն տեսակ տուգանքների անպայման վերացումը:
18. Արդիւնաբերողների և բանւորների միջև ծագած վեճերի քննութիւնը յանձնել միջնորդ դատարանին՝ կազմած երկու կողմի ներկայացուցիչներից, իսկ արձակած վճիռները պարտաւորեցուցիչ համարել երկու կողմի համար էլ:
19. Բանւորի արձակումը կարող է տեղի ունենալ միմիայն միջնորդ դատարանի որոշմամբ:
20. Խիստ վայելուչ վերաբերմունք դէպի բանւորը: Ծանր պատասխանատրութեան ենթարկել այն անհատներին, որոնք կը վերաւորեն բանւորի անձնական կամ ազգային պատիւը:
21. Բանւորներ վարձելու և արձակելու ժամանակ ազգային խտրութեան միանգամայն վերացումը:
22. Առողջապահիկ և յարմար բնակարաններ՝ տալով վաւելիք, լուսավորութիւն և ջուր:
23. Չրի և բնակարաններին մօտ բաղանիք:
24. Բաւարար քանակութեամբ առողջապահիկ կառքեր վերաւորներ և հիւանդներ տեղափոխելու համար:
25. Արհեստանոցները ղեկել լիովին առողջապահիկ պայմանների մէջ:
26. Չրի և պարտաւորեցուցիչ ուսումն բանւորների և արհեստաւորների երեխաների համար. տեղացիների համար դատաւորութիւնը մայրենի լեզուով:
27. Իւրաքանչիւր Ֆիրմա պարտաւոր է ունենալ դրա դարան-ընթերցարան բանւորների համար, նաև ճաշարաններ:
28. Բանւորը ստանալու է լրի վարձատրութիւն անգործ մնայած դէպքում, եթէ այդ առաջ է եկել իրանից անխախ պատճառներից, նաև գործադուլների ամբողջ ժամանակամիջոցում:

Ճ. Յ. Դ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆ. ԿԵՆՏՐ. ԿՕՄԻՏԵ

Բազու, 19 դեկտ.

II

ԲԱԳԻԻ ԲՈՂՈՐ ԲԱՆԻՈՐՆԵՐԻՆ

Ը ն կ ե ռ ն ե ը ք ան ւ ո ը ն ե ը ,

Գործադուլը շարունակում է. նրան յարում են բոլոր այն բանւորները, որոնք դիտակից են իրենց ծանր, անելանելի վիճակին:

Այժմ, ընկերներ, հասել է ժամը՝ մի անգամ ընդ միտ վճուելու. — ի՞նչ դիրք բռնել, ի՞նչ անել, որպէս զև այն բարւոքումները, որ մենք այսօր ձեռք կը բերենք, վերջը մեզանից չիւլեն:

Ընկերներ, միայն այն ժամանակ, երբ կողակները, ժանդարմներ, ստորկանութիւնը, այսինքն ցարի ամբողջ կառավարութիւնը կը դադարի պաշտպանել մեր թշնամիներին — կապիտալիստներին, երբ նա չի խանգարի մեզ՝ խմբւելու և քննելու մեր դրութիւնը, երբ նա չի արգելի մեր ընկերակցութիւնները — միայն այն ժամանակ կարող կը լինենք մեր ձեռքում պահել արած նւաճումները:

Իսկ այդ, ընկերներ, տեղի կ'ունենայ միայն այն ժամանակ, երբ ցարի միահեծան կառավարութեան փոխարէն՝ մենք կը հաստատենք ընտրական կառավարութիւն — ժողովրդական պարլամենտ. ուր մեր ընտրած պատգամաւորները կը պաշտպանեն մեր շահերը:

Գաղարեցեք, ընկերներ, ձեր պարագամունքը, փողոց դուրս եկէք և յայտնեցէք ձեր պահանջները: Պահանջեցէք ժողովրդական պարլամենտ, ընդհանուր դադարի ձայնատուութիւն, ազատութիւն մամուլի, խօսքի և համախմբման, անկախութիւն կազմակերպիչ, լեհաստանի, Ֆինլանդիայի և քաղաքական բոլոր բանտարկեալների ու արտաքսիանների կատարեալ ազատութիւն:

Չէնք ձեռք, ընկերներ, դրո՛՛հ աւելցէք ցարի սպասուորների դէմ, որոնք ձեր բերանն են փակում և ձեր ժողովները քանդում:

Դեպի առաջ, ընկերներ, դեպի համարձակ, վճուական կռիւ: Կորչի՛ միապետութիւնը: Կեցցէ՛ ժողովրդական պարլամենտը:

ՌՌԻՍ ՍՕՅԻՍԼԻԿԱՏՅՈՒՆԱԿԱՆՆԵՐԻ
ԲԱԳԻԻ ԿՕՄԻՏԵՑ

III

ԲՈՂԱՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՐԻՆ

Մենք, բանւորներս, դուրս կը գանք Բագուի փողոցները, որպէս զի ամուր և ազատ կերպով առենք, որ ինքնակալական կազմը, մինչև այժմ կենդանի ամեն ինչ ձնշող — պէտք է ոչնչանայ, ջնջուի և փոխարինուի ազատ կերպով ընտրած ժողովրդի ներկայացուցիչների կառավարութեամբ, որ ձաբօծիայի դէմ մղւող անմիտ, կործանիչ պատերազմը պէտք է դադարեցուի, որ պէտք է մշակեն նոր օրէնքներ, որոնք ապահովէին ամէն մի մարդու, ով որ ուզէ նա լինի — հայ, ուսու, հրէայ, թիւրք և այլն — միատեսակ հնարաւորութիւն լիակատար մարդավայել կեանք վարելու:

Անցեալի փորձից դուրս լաւ գիտէք, որ մեր ցոյցերը ոչ մի մասնաւոր մարդու ոչ մի կերպ չեն սպառնում: Բայց ինչպէս ձեզ յայտնի է, կառավարութիւնը Թիֆլիզից զօրք է բերել, որպէս զի մեզ հնարաւորութիւն չտայ ցոյց կազմելու: Մենք, սակայն, չենք կարող այդ արգելքի առաջ կանգ առնել, ինչ որ լինի մենք դուրս կը գանք ցոյցի և հնարաւոր է, որ Բագուի փողոցները արեամբ հեղեղւեն:

Մի՛ լինիք անմասնակից հանդիսատեսներ, միայնք մեզ հետ, քանի որ մենք կուզուք ենք ձեր երջանկութեան համար: Որքան հակայական լինի ցոյցը, նոյնքան հաւանական է, որ կառավարութիւնը երկիւղ կրէ զենքի դիմելու:

Խանգարեցէք ազմիստարայիային, ազգեցէք զօրքի և սպաների վրայ, որպէս զի նրանք չձգնեն ուժով ձնշել մեր բողոքը: Բռնութեանը մենք բռնութեամբ կը պատասխանենք: Ինքնակալական կազմը խեղդւում է սեփական յանցանքների մէջ և նրա դէմ մղած միահամուռ, սերտ դրո՛՛հ մեզ յաղթանակ է ետտանում: Ով որ պատիւ ու խիղճ ունի, ով թո՛՛մակ է գնահատում իր զաւակների սպազան, իր հայրենիքի սպազան, նա չի մնայ անուշադիր հանդիսատես և մեզ կը միանայ:

Դէպի Տրապարակ մեր կարմիր դրօշակների տակ մենք կուլում ենք ցարի կառավարութեան բոլոր ճնշածների և հարստահարածների ազատութեան համար: Մենք պահանջում ենք. —

Ամբողջ ժողովրդից ազատ կերպով ընտրած Հիմնադրական ժողովի հրահրելը:

Ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ընտրողական իրաւունք:

Բոլոր ժողովուրդների օրէնքի առաջ հաւասարութիւն, առանց սեռի և ազգութեան խտրութեան:

Մամուլի, խօսքի, ժողովների, միութիւնների և գործադուլների ազատութիւն:

8-ժամեայ բանտարկան օր:

Արջի ցարի ինքնակալութիւնը, կորչի՛ պատերազմը:

Արջի ցարի մանիֆէստը, կորչի՛ կապիտալիզմը:

Կեցցէ՛ դէմօկրատ հանրապետութիւն, կեցցէ՛ Ռ. Ս. Ռ. հանրապետութիւն:

Կեցցէ՛ միջազգ. Սօց.-Դէմօկրատիան, կեցցէ՛ Սօցիալիզմը:

Ռ. Ս. Ռ. Բ. Կ. ԱԱԳԻՒ ԿՕՄԻՏԵՏ

Բ Ա Գ Ի Ի Գ Ո Ր Շ Ա Գ Ո Ւ Լ Ը

(Թ.Ղ.Թ.Ա.Կ.ՈՒՆ.Թ.ԻՆ ՔԱԳ.Դ.Յ.Տ)

28 դեկտեմբեր

Գործադուլը պայթեց անսպասելի կերպով դեկտեմբերի 13-ին (հին տոմ.): Մի 10-12 օր դրանից առաջ, Ռուս. սօց.-դէմօկրատների կողմից դիմում էր եղել «Դաշնակցութեան» տեղական մարմին, առաջարկելով խորհրդակցել ընդհանրապէս բանտարկան շարժումների մասին, որպէս զի ապագայում տեղի ունենալիք գործադուլների ժամանակ բոլոր յեղափոխական մարմինների գործողութիւնները ներդաշնակ լինեն: Դաշնակցականները մի երկու նիստ գումարելով, մշակել էին մի շարք ինդիքներ և իրենց ներկայացուցել միջոցով առաջարկել էին սօց.-դէմօկրատներին՝ յատուկ ժողով գումարել՝ հարցերը քննելու համար: Առաջարկը հաւանութիւն է գտնում, սօց.-դէմօկրատները խոստանում են, բայց լուծութիւն են պահում մինչև գործադուլի օրը: Դեկտ. 13-ին միայն ինդուրում են Դաշնակցութեան ներկայացուցչին՝ գալ իրենց ժողովին: Դաշնակցական մարմինն էլ նկատելով, որ գործադուլը հրատարակած է առանց իր խորհրդակցութեան ու անյարմար ժամանակ, պատւիրում է իր ներկայացուցչին գնալ ու յայտնել, որ ինքն առայժմ ձեռնպահ է մնում: Սօց.-դէմօկրատների մեծամասնութիւնը նոյնպէս գտնում էր, որ ըրպէն անյարմար է. բայց Ի՞նչ անել. պէտք էր այնուամենայնիւ, պահել գործադուլների վարկը: Եւ Դաշնակցութեան տեղական մարմինը իր ղեկավարութեան տակ գտնուող բանտարկութեան կողմից բաց թողնց մի թուղթիկ, որի մէջ դրեց 24 պահանջ: Միաժամանակ նա համաձայնեց ուղարկել երկու ներկայացուցիչ՝ ուրիշ յեղափոխական կազմակերպութիւնների հետ նիստեր գումարելու և համերաշխ գործակցութեան միջոցներ խորհելու: Մինչ այդ՝ բանտարկան պահանջների մի շնչին մասը միայն ընդունել էր նաւթարդիւնաբերողների կողմից, մեծ մասը մերժել էր: Յեղափոխական կազմակերպութիւնների ներկայացուցչների խառն ժողովը մշակեց պահանջների մի միւսիւմ, 25 կէտից բաղկացած և ղրկեց նաւթարդիւնաբերողների յանձնաժողովին. վերջինս ընդունեց 23 կէտը շնչին փոփոխութիւններով: Ամենամեծ յաղթանակը, որ տարաւ բանտարկութիւնը այս գործադուլի միջոցին, այն է, որ դրամատէրերը ընդունեցին 9-ժամեայ աշխատանքի օրը: Այն ժամանակ Դաշնակցական մարմինը, ի թիւս ուրիշների, հրատարակեց մի նոր թուղթիկ, հրահրելով բանտարկներին՝ վերսկսել աշխատանքը պայմանական ամսի 28-ին:

Պէտք է ասել, որ գործադուլի ընթացքում դրամատէրերը դիմել էին իշխանութեանը՝ ինդրելով, որ ոստիկանութիւնը և զօրքը չմիջամտեն, քանի որ խաղաղ գործադուլ է: Եւ իրօք, նրանք չէին միջամտում: Ամբողջ 10-12 օր ազատ, բազմամարդ ժողովներ էին տեղի ունենում: Բայց չորս օր առաջ, երբ բանտարկները Բալխանի Նօբէլի մօտ սկսում են աշխատել, գիտակից բանտարկութիւնը գնում է գործը ընդհատելու. գալիս է կօզակների մի վաշտ, և մի պարապ զալպից յետոյ սկսում են կրակել բանտարկների վրայ: Սպանում են 6 հօգի, վիրաւորում են 23 հօգի: Սպանւածների մեծ մասը հայ է, մէկը թէ երկուսը միայն մահմեդական. ոչ մի ռուս չէ սպանւած: Զօրքը զոհ տուեց մի կօզակ: Նման դէպք տեղի ունեցաւ միւսնոյն օրը Բիբի-Էյբաթում, ուր Մուխտարովի գործարանի մօտ ընդհարում եղաւ գործադուլ անող և աշխատող բանտարկների միջև: Վերջիններիս օգնութեան է հասնում կօզակների խումբը, և սպանւում են էլի 6 հօգի, վիրաւորում են 10-12 հօգի: Սպանւածներ չէր մէջը — դարձեալ ոչ մի ռուս. վիրաւորածների մէջ — շատ շնչին տոկոս: Մեծ մասը կրկին հայ է, թէև բիչ չէին գործադուլին մասնակցող և ռուս բանտարկները:

Աստահելի աղբիւրից հաւատացնում են, որ դա պատահական բան չէր. կոտորածին մասնակցող մի զինուոր հետեւալ օրը՝ հարբած դրութեան մէջ՝ պատմել է, որ հրամարտ է եղել խիել գլխաւորապէս հայերին և խնայել ռուսներին...

Յ Ե Ղ Ա Փ Ո Խ Ա Կ Ա Ն Կ Ռ Ի Ի

Կ Ռ Ի Ի Ն Ե Ր

Ս Ա Ս Ն Ո Յ Ե Ի Մ Յ Ո Յ Գ Ա Յ Տ Ի Ն Մ Է Զ

(Մանրամասն նկարագրութիւն)

1. ՀՆՂԻՆԻ ԿՌԻԻԸ

1904 թ. յունւար 10-ին Տալինը (Կէլեկուզանի շրջանի մէջ մի ագարակ է, Կէլեկուզանէն 1 1/2 ժամ հեռու դէպի արևելեան հարաւ) հաւար եկաւ Իշխընձորէն՝ թէ միւտիր Քօռ Սլօն 15 սուարիներով և իր աշխրէթով եկեր է՝ Հնդին, Արտիոնը, Ընկուզնակ և Իշխնձորը թալանելու: Վահանի և Անդրանիկի կարգադրութեամբ, խմբի անդամներէն մի քանիսը՝ Գէորգ Զափուշի և Մուրատի ղեկավարութեան տակ՝ հօն օգնութեան կ'ուղարկէին: Տղայք կը հասնին Իշխնձոր, ուր փախեր եկեր էր հեղինցի հարուստ հայ մը, Վարդան անունով, և օգնութիւն կ'ուզէր հայ զինուորներէն իր պատիւը և կայքը ազատելու համար:

Այս Վարդան առաջ ոչ մի հաւատ չ'ունէր յեղափոխութեան վրայ և կը մտածէր սուլթանի հաւատարիմ հպատակ ձևանալով՝ ապահովել զինքը: Դա մի ժամանակ նոյնիսկ մատնիչ ձանջեցեցաւ յեղափոխականներու

կողմէն, որոնք պիտի սպաննէին զինքը: Անգամ մը Քոռ Սլօ յայտնի աւագակը Հեղին գալով կը յափշտակէ յիշեալ Վարդանի 60 ոչխարը, 3 ձին և 20 ոսկի դրամը: Այդ ժամանակ միայն կը համոզուի սուլթանի հաւատարիմ հպատակը, որ խաբւեր էր իր հաւաքին մէջ և որ հաստն ու բարակը մէկ գին ունին: Եւ միակ միջոցը կը գտնէ՝ յեղափոխականներուն դիմել և անոնց պաշտպանութիւնը խնդրել: Ատոր համար էր որ նա Իշխնձոր եկած էր: Տղայք, առանց ի նկատի ունենալու Վարդանի հակայեղափոխական անցեալը, վեր կը կենան գնալու Հեղին՝ աւագակը պատժելու համար: Երբ տղայք ծանապարհ կ'իյնան՝ քրդերը կ'իմանան անոնց շարժումը և անմիջապէս կ'իմացնեն Քոռ Սլօյին: Սա Փուսուր կը փախչի՝ կառավարութեանն ուժ ստանալու համար, որովհետեւ այդ ատեններ Տիգրանակերտէն Փուսուր էր եկեր 400 հօգիէ բազկացած մի գունդ զօրք:

Տղայք Հեղին հասնելուն՝ կը գրեն Քոռ Սլօյին, որ տարած թալանը ետ դարձնէ: Նա կը մերժէ թալանը դարձնել և բագրանցի աշերէթն ալ օգնութեան կը կանչէ. միւսին ժամանակ նամակ մը կը գրէ տղայոց՝ թէ ինքն նպատակ չունի հայերու հետ թշնամանալու, այլ կառավարութիւնն է որ այդ ընել կուտար:

Ճիշդ այս ժամանակներ Հեղին կերթան նաև մի քանի ահարոնքիներ, որոնք նոյնպէս օգնութիւն կ'ուզէին տղաներէն: Մի քանի օր առաջ քրդերը Ահարոնքի վրայ էին յարձակւեր և սպաններ էին ինն հօգի հայերէն և փախցուցեր եօթ տարեկան մի աղջիկ: Չարագործները բոլորովին ազատ էին, բայց կառավարութիւնը համարողական արդարագրտութեամբ՝ եղած ոճրագործութեան համար իբր յանցաւոր ձերբակալած էր հայերէն 8 հօգի:

Երբ Սլօն զօրքեր ու քիւրդեր հաւաքած Հեղինի վրայ կուգար՝ տղայոց օգնութիւնը սահման չունէր. կուրը սկսաւ, բայց յեղափոխականներու մօտիները թող չտուին թշնամիներուն առաջնաւ. վերջինները պարտաւորեցան շուտով ցրելի և քաշելի: Այդ տեղի ունեցաւ յունւարի 17-ին *):

Երբ թշնամիները քաշեցան, տղայքն ալ չմնացին գիւղի մէջ. իրենց հետ վերցնելով գիւղացիներուն և անոնց շարժական կայքը, անցան Անտկունք: Զինուորներէն Պօղոս քանի մը ընկերներով մնաց Մեզրէ՝ Հեղինի գիծը պաշտպանելու, քրդերի յանկարծակի յարձակման պարագային: Մի օր Մեզրէի մօտեր կ'երևին մի քանի քրդեր, լրտեսելու համար այդ կողմերը. ատոնցմէ մէկն էր Սալէհ անուն յայտնի ոճրագործը, որ սպաններ էր չորս հայեր և Սերոբի մատնիչներուն միացած՝ մեծ դեր էր խաղացեր մատնութեան գործին մէջ. Պօղոս կ'իմանայ այդ քրդերու ներկայութիւնը և յանկարծակի բերելով՝ կը բռնէ երեքն ալ. կը սպաննէ Սալէհը: Իսկ միւսները ազատ կ'արձակէ: Այդտեղէն Պօղոս կ'անցնի Ընկուզնակ, ուր եկեր էին նաև Մուրատ և Գէորգ Չավուշ:

2. ՅՈՒՆԱՆԻ ԿՈՒՒՐ

Յունւար ամսին Հրայր և Առաքել հինգ զինուորներով դաշտն էին իջել՝ գործերը կարգադրելու և զինուորական խորհուրդ կազմելու համար: Կառավարութիւնը իմանալով անոնց ներկայութիւնը՝ կըսկսի հետամուտ լինել

Ծանօթ. — Հեղինի մէջն է 1894-ի կոնկրետ յայտնի Տերոս Ընթրի Գրգոյի գեղեցիկը:

զիրենք բռնելու: Սուրբ Սարգսի պահոց առաջին օրերը՝ Առաքելը կը բաժանուի Հրայրէն և Յունան կերթայ չորս ընկերներով այնտեղ մէկ-մէկ, երկու-երկու կապրին հայոց տունները մի քանի օր: Փետրուարի սկզբին լուր կը բերեն Առաքելին, թէ զինուորները պաշարեր են զինուոր Գրիգորը և Ջնածոն: Իսօն դուրս կուգայ իմանալու համար թէ ինչ կ'անցնի կը դառնայ: Գուրը նա կը նկատէ, որ զինուորներ խոտեր վերցուցած կը տանեն տղայոց գանձած տունը այրելու: Իսօն կը կրակէ հրացանը, որու ձայնէն Առաքել և ընկերներն ալ դուրս կը նետուին տուններէն և կը յարձակին զինուորներուն վրայ: Զինուորները փախչելով կը մտնեն Մեղրագետի թմբերուն տակ: Առաքել երկու հօգու դիրք պահել կուտայ գիւղի աղայի տունը (քէօշի), որ գիւղի մէջ ամենաբարձր շինութիւնն է, իսկ ինքն միւս ընկերներու հետ թիւրք զինուորներու ձիերը կը բերէ և քէօշիի տակ պատրաստ կը պահէ: Թիւրք զօրքերը արդէն հաւարը ձգեր են ամէն կողմ. շուտով օգնութեան կը հասնի Նորշէնի զօրքը: Կուրը բաւական սաստիկ կերպարանք կը ստանայ: Կուր ժամանակ մի զինուոր նեղ մնալով տղայոց արձակած գնդակներէն՝ կը փախչի և կը մտնէ տուն մը. Իսօն կը նկատէ զայն և խոտ կը բերէ այրելու զանիկայ տան մէջ: Տանտերը, որ կնիկամարդ մըն էր, կը միջնորդէ և չուզիր թող տալ, որ Իսօն իր դիտաւորութիւնը կատարէ, ճիշդ այն ժամանակ, երբ Առաքելի ձայնն ալ միւս կողմէն կը կանչէր Իսօյին, որ զինուորի մը համար ժամավաճառ չլինի, այլ կարգին դիրք մը պահպանի, բայց կինը չի մոռնար զինուորին հրացանն ու փամփուռները առնելէն յետոյ միայն արձակել:

Հրացաններու բերնէն արձակուող կրակը և վառօդի հոտը՝ կ'արծարծէ տղայոց կուր եռանդը: Առաքելը հեզներով թշնամիներու ուժը պոռալով կ'ըսէր. «Այդպէս 100-ով 200-ով կ'ուզէք մեզի հետ գլուխ ելնել, անիծածներ, լաւ գիտցէք, որ խաբւած էք»:

Իսկ կտրիճ Իսօն արծուի պէս կտուրէ կտուր կը թռչէր կուրը ժամանակ՝ դիրքերը պահելու համար: Երեկոյեան ժամը 5-ին կուրը կը վերջանայ, տղաներուն ոչ մէկ մնաս. թիւրքերէն կը սպաննուի մէկը և մէկ ալ կը վերաւորուի: Երբ մշուշը կը թանձրանայ՝ դաշտին վրայ և մութը կամաց-կամաց կը տիրէ, մեր քաջերը կը նստին զօրքերէն խլած ձիերուն վրայ և կը հեռանան գիւղէն: Կուր ձայնէն շրջակայ գիւղացիներ և Հրայր՝ կը պատրաստուին օգնութեան հասնիլ, բայց տղայք արդէն հեռացած էին:

3. ՏԱՓԸՔԻ ԴԱԽԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Երբ Յունանի կուր լուրը Տավրներ կը հասնի, Սեպուհ, Մաբատ և Ասատուր՝ զինուորները վերցնելով կ'ուզեն օգնութեան գնալ և կը հասնին մինչև Հաւատորիկ: Անդրանիկն ալ մի ուրիշ խմբով մինչև Քօփ կուգայ նոյն նպատակով: Քօփի մէջ Անդրանիկ կ'իմանայ, որ մի քանի տափըքի քիւրդեր, որոնց գիւղն էր եղեր նախորդ գիշեր, մտադրւած են եղեր սպաննել զինքը: Ետ կը կանչէ Սեպուհը և անոր հետ միասին կը վերադառնայ Տափըք: Այնտեղ կը հաւաքէ քրդերը և կը պահանջէ, որ անպատճառ իրեն յանձնեն իր դէմ դաւադրութիւն սարքողը. քրդերը կը յանձնեն դաւաճանը, որ կըս-լաննէ անմիջապէս Անդրանիկի հրամանով: Այնուհետև կը

գրաւեն քիւրդերու քեօշկերը, 24 զէնք, 400 ոչխար և 100-ի չափ տաւար: Իրենց սիրելի Տերօսի կեանքի դէմ եղած դաւադրութեան լուրը առնելով՝ Սէմալի, Շէնքըքի, Աէլիէկուզանի, Շուշնամբրկի, Քօփի, Կարմալի, Աղբիի, Իրիցունքի, Աշխանցիքի և ուրիշ գիւղերու իշխանները իրենց զինուորներով մօտ 300 հօգի, անմիջապէս Տափըք կ'իջնեն՝ յանցաւորները պատժելու. բայց մինչև անոնց հասնելը, պէտք եղած կարգադրութիւնը արբւր էր Անդրանիկը: Կը կարգադրուի նաև, որ քիւրդերը բոլորովին հեռանան Տափըքէն: Այստեղ հայերը քիւրդերու մօտ գտան իրենցմէ թալանուած և տարուած շատ մը գոյքեր:

Տափըքի դաւադրութենէն մի քանի օր յետոյ, Տիգրանակերտէն Սասուն կուգայ գունդ մը նոր զօրք: Գէորգ Չաւուշ նամակ կը գրէ Տավըներ և օգնութիւն կ'ուզէ: Ատոր համար ալ Սմբատ մի քանի զինուորներով կերթայ կը միանայ անոր: Սմբատ երկար չի մնար Ընկուզնակ, այլ կանցնի Տալուորիկ, որ շարունակ Բուսանաց քիւրդերու սարսափին ենթակայ էր: Քիչ վերջ Գէորգ Չաւուշ ինքն ալ կերթայ Արտկոնք, ուր նոր զօրքեր էին եկեր. իսկ իր տեղը Ընկուզնակի մէջ կը թողնէ Մխիթարը: Գէորգ Չաւուշ այդ երեք դիրքերի վրայ կը հսկէր շատ արթուն կերպով:

(Շարունակելի)

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

Ս Ա Ս ՈՒ Ն Ե Ի Ս ՈՒ Յ

Մուշ 25 նոյեմբեր, 1904

Ցաւալի է ըսել, որ անլուր ճնշումներու շնորհիւ գաղթի շարժումներ սկսեցին են սասունցիներու մէջ. լեռ ու ձոր ձիւնով պատած է, օդին խստութիւնը շատ ահռելի է: Կառավարութիւնը շարունակ արգելքներ կը հանէ դէպի Սասուն պարէնի փոխարութեան, որ կը կատարեն շալակով ո՛չ միայն սասունցի տղամարդիկ, այլ կիներ, փոքր մանուկներ և աղջիկներ՝ այն ալ մերկ...

Կարելի էր գուցէ համբերել օդի անողորմութեան, սակայն անկարելի է դիմանալ Սասուն հաստատուած թիւրք զօրքերու անկարգութիւններուն: Անոնք շարունակ տարապահիկ աշխատութիւններով կը չարչարեն ժողովուրդը. իրենց զինուորական պիտոյքները, պաշարը, նոյնիսկ վառելանիւթը կը փոխարեն խեղճ սասունցիի կռնակով՝ առանց ուէ փոխարինութեան: Շարաթ մը առաջ Մուշէն 70-ի չափ զինուորներ կը գնան Սասուն և երկու օր կը մնան Շէնքըք. բոլոր հայերը ծեծելով ու նախատելով տարապահիկ կը վարեն գիւղէ գիւղ և կը լափեն խեղճերու օրապահիկը, նոյնպէս Սէմալի մէջ և ինչ Երբ ժողովուրդը կը գանգատի, կ'ըսեն. «Մեռնիք, հօգիսիդ ելնէ, մեր գրաստներու փոխարէն շարունակ ձեզ պիտի ծառայեցնենք, շունք»...

Այս բանէն յուսահատուած՝ մաս մը ընտանիքներ Շէնքըքէն, Սէմալէն, Աղբիէն և ինչ, գաղթել են Դաշու: Կը վախցւի, որ գաղթը ընդհանրանայ, նոյնը կը լսւի Տալուորիկի կողմերէն: Նոյեմբեր 13-ին այն կողմի զինուորներ կը քայքայեն հայոց 5 տուն ի Տալուորիկ, 2՝ ի Հողիք, 3՝ ի Հարթք և փայտերը կը տանեն ու կը վառեն: Ատոր վրայ Տալուորիկի Էգու թաղը կը գաղթէ Փուրխ և ԽՆՏովիտ գիւղերը. եթէ զինուորները հոն ալ հայածեն, բոլորովին պիտի գաղթեն: Արդէն կը ստիպեն

ու կը ճնշեն, որ հայերը փախչին: Հոսնուցիներ փախեր են Քրդամանք գիւղ, թուալինքցիները Յարդիսիկ, Հոգմանքէն 6 տուն Փսանաց գաւառ:

Ժողովուրդի կացութիւնը շատ ու շատ ծանրացաւ նոր և սոսկալի հարկահաւաքութեամբ: Հրէշ ոստիկանները գիւղերու մէջ կը բանտարկեն ոչ միայն մարդիկը, այլ և կիները: Մարդկանց բերանը աղբ կը լեցնեն, կը թքեն, կը ծեծեն, կ'անպատուեն, պաշ ջուրի մէջ թաթխելով կը չարչարեն, շնայելով որ ժողովուրդը իր պարտքերը տուած է. նորէն փայտ ու միս չարչարանքով կը պահանջեն և կը գանձեն: Ժողովուրդը բողբոջէ ձեռք քաշեր է, որովհետև կառավարութիւնը արգելած է և կարգադրած է, որ հայերուն կողմէ բողբոջութիւն չտրուի:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Խ Ա Բ Ր Ի Կ Ն Ե Ր

(ՇՐՆՍՈՒՆՆԵՐԿՈՒԾՐՈՐԿ ԿՄՄԱԿ)

Ս. Պետերբուրգ, 27 դեկտեմբերի 1904

— Ի՞նչ եմ տեսնում, ի՞նչ եմ լսում, պիտի գոչեր «Աէրք Հայաստանի» ի սգաւոր հեղինակը, եթէ գերբնական հրաշքով դուրս գար իր անյայտ գերեզմանից, և կանգնած Քանաքեռի բլրակի վրայ նայեր իր շուրջը, դէպի Հայկական աշխարհը:

Ի՞նչ աներևակայելի տարբերութիւն: Երբք քառորդ դար առաջ, երբ քրիստոնեայ ոռու բանակը ոտք դրեց Արարատեան դաշտը հայութեան բոլոր խաւերը՝ յափը շատակաւ քրիստոնեայ կառավարութեան սիրով, անհուն կասկածի ու ատելութեան նշաններ էին ցոյց տալիս դէպի դարևոր թշնամին, դէպի մահաձեռակալ ազգաբնակչութիւնը: Պատմութեան թելադրութիւնն էր այդ, ներշնչուով սև, դժբախտ անցեալի, երբ երկու ժողովուրդները՝ բաժանուած ծագումով կրօնով, ազգայնական հակամտերով, միմեանց միմեան էին ուռուտ, պատրաստ կործանելու մէկը միւսին:

Եկաւ նոր տիրապետութիւնը: Քրիստոնէութեան և քաղաքակրթութեան անունով նոր շօջան բացւեց: Եւ հայ ժողովուրդը, որ համ քրիստոնեայ էր, համ հակաւ դէպի քաղաքակրթութիւնը, նեւուց նոր տիրապետողների գիրկը, պատանեկան յափշտակութեամբ: Հաշտութեան դարագլուխ բացւեց. և տեղացի ազգերի մէջ, շնորհիւ հեռատես քաղաքականութեան, խաղաղութեան գործը փոքր առ փոքր թեւեր առաւ:

Սակայն ո՞ւր է քաղաքական հեռատեսութեան այդ հաճելի շօջանը, այնքան գրաւիչ մտածող համար: Ո՞ր են ան օրերը, երբ բուռն ատելութիւնը տրամադիր էր տեղի տալ խաղաղ մտածողութեանը, երբ հաշտեցնող քաղաքականութեան հմայքին ենթակայ, քրիստոնեայ հայը և մահաձեռակալ թիւրքը փոքր առ փոքր վարժուում էին միմեանց աչքերին եղբայրբար նայելու, մոռացութեան տալու հին պատմութիւնը, սիրով ապրելու նոյն հողի վրայ, նոյն արևի տակ:

Ո՞ւր են այդ օրերը, Հարցրէք ցարերի սիրելիներին, հարցրէք Գօնուկովի պատմագրին, Շալիկովների գաղտնի հրահանգներին ծանօթ պաշտօնեաներին, հարցրէք Գօնիցիին և նրա խորհրդաժողովի «յայտնի և անյայտ»

անդամներին, և նրանք թարմ փաստերով կը պարզաբանեն, թէ ինչպէս, որտեղից և ի՞նչ ճանապարհով նախկին անսահման ռուսասիրութիւնը տեղի տւեց այժմեան ռուսատեցութեան, և ի՞նչ եղանակով նախկին փոխադարձ ատելութեան տեղ սկիզբն առաւ այն համերաշխութիւնը, որ ձգտում է մերձեցնել կովկասեան հալածական ազգութիւնները, երբեմն այնքան թշնամաբար տրամադրւած, այնքան անտեղեակ իրենց քաղաքական շահերին:

Ահա մի քանիսը փաստերից:

Ութսունական թւականներին, Երևանի նահանգապետ Շախիկով, ներշնչւած Գոնդուկով-Աօրսակովի քաղաքականութեամբ, առաջինը եղաւ, որ Երևանի նահանգում լարեց թիւրքերի և հայերի յարաբերութիւնները: Թիւրք խաները, ազգեցիկ և կաշտուող, կանչուում էին նահանգապետի ապարանքը և անուղակի յորդորներ ստանում՝ դէպքեր ստեղծելու... Ոստիկանութեան կարևոր անդամները գիշեր-ցերեկ զբաղւած են պատմութիւններ սարքելով: Գաղտնի հրահանգները յաջորդում էին մէկը միւսին, և այդ բոլորի հետևանքը եղաւ այն, որ նախկին խաղաղութեան յաջորդեց՝ կուեցնելու սիստէմը, և մի քանի անգամ Երևանի քաղաքային հրապարակը եղաւ թատր հայ-թիւրքական ընդհարումների, արիւնահեղ և վերին աստիճանի գրգռիչ:

Տարիներ յետոյ այդ քաղաքականութիւնը անցաւ Բագուի նահանգը և նրա կենտրոնական քաղաքը, որտեղ թիւրք տարրը ահագին թիւ է կազմում, ականատես եղաւ անախորժ դէպքերի: Մի քանի ազգեցիկ թիւրք դրամատերեր, որոնք սերտ կապեր ունէին նահանգական իշխանութեան և առհասարակ իշխանութեան հետ, անդադրում կերպով ներշնչումներ էին ստանում՝ թող չտալ, որ թիւրքերը օրինակ վերցնեն հայերից, և կամ մօտենան նրանց: Այդ ներշնչումները պաշտօնական թղթերով չեղան, ճիշդ է, բայց թէ՛ հրահանգողները և թէ՛ հրահանգուողները միմեանց լաւ էին հասկանում, և այդ պատճառով երկպառակութեան թոյնը թափանցում էր ամբոխի բոլոր խաւերը մեծ աղողութեամբ: Համիլամական հողմը աւելի բորբոքեց կրակը: Թունալից հողմը գալիս էր Ա. Պոլսից, զանազան էմիսարների միջոցով, ուղարկւած նոյնիսկ Աբգիւլ Համիդի անձնական կարգադրութեամբ: Թէ՛ «տեղական» և թէ՛ «արտաքին» պրօպագանդը ուղղած էին հայերի դէմ, և հասկանալի է, թէ ինչու կարձ միջոցում թիւրքերի վերաբերմունքը դէպի հայերը դարձաւ շատ կասկածելի և չափազանց ամպամած: Պառակտող քաղաքականութեան պտուղները երևացին, ի միջի այլոց, 1903 թւականին, երբ Բագուի թիւրքերը հայերի դէմ յարձակումն գործելու նշաններ ցոյց տւեցին, ոգևորւած այն աջակցութիւնից, որ ոստիկանութիւնը ցոյց էր տալիս այդ դիւական ծրագրին:

Երկպառակութեան քարոզը մահմետական նահանգներից թափանցեց այն քաղաքները, ուր հայերը դրացի են վրացիներին, և հարկաւոր չէր երկար ժամանակամիջոց, որպէս զի հայ-վրացիական յարաբերութիւնները, երբեմն խաղաղ և մտերմական, ընդունէին թշնամական կերպարանք: Բաթումի և Թելաւի դէպքերը, ինչպէս և Թիֆլիսում տեղի ունեցած թիւրքիմացութիւնները՝ դրան ապացոյց:

Եկեղեցական կալւածների գրաւման միջոցին կառավարութեան անսովորութիւնը իր չափը կորցրեց: Շատ

քաղաքներում, ինչպէս Շուշի, Նախիջևան, Գանձակ, թիւրքերը բացարձակ հրաւէր էին ստանում ոստիկանութիւնից՝ զինել և յարձակում գործել հայերի վրայ: Զրի զէնք էին առաջարկում. շատ դէպքերում՝ նոյնիսկ փող և պաշտպանութիւն: Եւ կատարեալ հրաշք պիտի համարել՝ որ ֆանատիկոսացած թիւրք ամբողջ չխաբւեց, չյափշտակեց և չէզոք մնաց, ով գիտէ, գուցէ այն պատճառով, որ լուր կար, թէ հայերը մեծ պատրաստութիւններ ունեն...

Գաւը աւելի հեռու գնաց: Կառավարութիւնը կամեցաւ ռուս գաղթականներին և մալական գիւղացիներին ևս իր գործիք դարձնել և այդ նպատակով 1903 թւի վերջերին այդ համայնքներից շատերին գաղտնի կերպով զէնք ցրեց, հրահանգելով՝ «յարձակել հայերի դէմ, երբ նրանք ապստամբութեան փորձ անեն»: Գա է հիմնական պատճառը, որ եկւոր գաղութների վերաբերմունքը դէպի տեղական ազգաբնակչութիւնը օրէցօր դառնում է աւելի և աւելի յանգուգն, գրգռող և անսանձ:

Յիշատակւած փաստերը, թուում է, բաւական են բնորոշելու այն ուղղութիւնը, որին հետևում է ցարի կառավարութիւնը, մի ուղղութիւն, որը առանց ուէէ «գործնական» հետևանքի հասցնելու, բնականաբար ստիպեց տեղացի ազգերին՝ բաց անելու իրենց աչքերը, խոր թափանցելու գաղտնի ծրագրիների մէջ և ըմբռնելու իրենց անմիջական անելիքը: Այդտեղից է ահա բղխում այն ընդհանուր շարժումը, որ սկիզբն է առել մինչև այժմ միմեանց թշնամի ազգերի մէջ, և որի նպատակն է շողկապել ներհակ ուժերը և ուղղել նրան դէպի ընդհանուր թշնամի — միապետութիւնը:

Բնորոշ են հետևեալ նշանները:

Երևանի մէջ երկու ամիս առաջ լոյս տեսաւ մի շրջաբերական, գրած թիւրքերէն լեզուով և ուղղած մահմետական ազգաբնակչութեան: Գա մի կոչ է, որ հրաւիրում է թիւրքերին ինչպէս և հայերին, չխաբւել կառավարութեան նենգամիտ քաղաքականութիւնից, ականջ չդնել նրա սին խորհուրդներին, նախատեսել այն կործանարար ծրագիրը, որի նպատակն է կուեցնել և թուլացնել տեղացի ազգերին, և իբրև վերջաբան՝ հրահանգում է անկեղծ, սրտաբաց և գիտակցական համերաշխութիւն և անկեղծ, սրտաբաց և գիտակցական համերաշխութիւն և անկեղծ, սրտաբաց և գիտակցական համերաշխութիւններ՝ հայերի և թիւրքերի մէջ:

Նոյնպիսի հրաւէրներ, թէև ոչ յատուկ շրջաբերականների ձևով, հայկական յեղափոխական մարմինները ուղղեցին և վրաց ժողովուրդին ու վրացի մտաւորականութեան: Մեր վրացի դաշնակիցները արձագանք տւեցին քանի մի անգամ: Եւ հակառակ շօվէն տրամադրութեան, որ վրացի ինտելիգենտ հասարակութեան մի մասի յատկանիշն է, համերաշխութեան գաղափարը, շնորհիւ արմատական և յեղափոխական տարրերի, փոքր առ փոքր ճանապարհ է գտնում ի վերիական մտածողութեան մէջ, իբրև գրաւիչ նախանշան՝ վաղուայ շողկապւած, դաշնակից գործունէութեան:

Աովկասեան բանւորական գործադուլները, կազմակերպւած Բագու, Բաթում, Թիֆլիս, ընդհանուր առմամբ՝ համերաշխ գործունէութեան և միացած դիմագրութեան արտայայտութիւններ են: Այդ շարժման մէջ, ուղղած կապիտալին և միապետութեան, վրացի բանւորը ձեռք տւեց մահմետական բանւորին, ռուս աշխատաւորը հայ աշխատաւորին: Եւ եթէ համերաշխութեան

գաղափարը կ'արտայայտուի նոյնպէս և գործադուլներից դուրս, այն դէպքերում, երբ բռնապետութեան զօժանդակներն ունենան և մի ազգից մէկը և այդ ազգութեան պատկանող պրօլետարիատը, և միւսները խօսքով և գործով արձագանք են տալիս նրա վշտերին ու կոչին. — դա կը լինի մի մեծ, վե՛հ յաղթանակ, սկիզբը թշնամու իրական կործանման. . .

Ճղնաժամի ներկայ շրջանը աւելի քան կարօտ է մարտական տարրերի մերձեցման: Մի տարի առաջ, եկեղեցական կալաճանների խմբան միջոցին, երբ բռն չայկական դիմագրութեան միացաւ ուսուցիչականութեան բողոքը, — կառավարութիւնը իր լեզուն կ'ըսէ: «Ներկայ թուականին, երբ մօրթիզասիօնի դէմ միաժամանակ դիմագրութեան հրաւէր կարդացին և՛ Դաշնակցութիւնը, և Սօցիալ-դեմօկրատները, և Սօցիալիստ-լեզակիսականները, և վրաց Յեղափոխական մարմինը, — կառավարութիւնը զգաց հակահարածի մեծութիւնը և յետ նահանջեց: Այդ համերաշխութիւնը՝ միապետութեան ստուգումն է, քայքայումը նրա ծրագիրները:

Յեղափոխական տարրերի մերձեցման գաղափարը չպէտք է նսեմանայ պատահական ու երկրորդական դէպքերից, որոնք անխորաթափանց, միամիտ դիտողի աչքում՝ շօվինիստական բնութիւն ունին, և կարող են անցանկալի սառնութեան առիթներ լինել: Բռնապետութեան հարաւանները այնքան խիստ են և ահաբեր, որ ինքնապաշտպանութեան բնագիծն էլ, բնականաբար, յաճախ ընդունում է խիստ ու ծայրայեղ կերպարանք:

Մի օրինակ:

Երբեմն Գովկասի մէջ հայ տարրը ուսական տիրապետութեան առաջապահ եղաւ: Ընդհանուր հակում կար ոչ միայն դէպի ուսական միտքը ու գրականութիւնը, դէպի ուսական նորագոյն շարժումները, այլ դէպի ուսական կառավարութիւնը: Հայ ընտանիքների մէջ մեծ աջողութեամբ մուտք էր գործում ուսաց լեզուն, ուսուցիչը, ուսուցիչը գաստիարակչուհին: Խառն ամուսնութիւնը դառնում էր սովորական: Ռուս պաշտօնեան անգամ մեծ յարգանքի առարկայ էր: Եւ ընդհանուր վերաբերմունքը՝ անկեղծ, բարեկամական:

Իսկ այժմ: Այժմ շատ բան է փոխուած: Խորապէս զայրացած այն անյուր տանջանքներից, որ միապետութիւնը պատճառեց խաղաղ, երբեմն այնքան լաւ տրամադրած ազգութեան, հայ ժողովուրդը փոխեց իր դիրքը: Նախկին վատահոգութիւնը փոխարինեց մի անսահման կասկածով: Ամէն ինչ որ ըզնուում է կառավարութիւնից՝ ուրիշ բան չէ ներշնչում, բայց եթէ կասկած ու նոյնիսկ թշնամանք: Հակակրօնական զգացմունքը, հալածանքի ազդեցութեան տակ, աճեց և տարածեց այնպիսի խնդիրների վրայ, որոնք արդի բեժմի հետ կապ էլ չունին: «Ռուսաց թատրոն չպիտի գնալ. ընտանիքների մէջ ուսուցիչներ չպիտի պահել. այլևս ոչ մի ամուսնութիւն ուսուցիչ հետ» — ահա այն բացառնչութիւնները, որ լուում էին ամբօխի մէջ ցասման օրերին: Այդ բացառնչութիւններն ու կարծիքները, բարեբախտաբար հոսանք չկազմեցին, չդարձան ժողովրդական վերաբերմունքի արտայայտութիւն, մնացին իբրև բացառիկ, առանձնացած դէպքեր, — բայց իբրև հակակառավարչական տրամադրութեան նշաններ՝ արժանի են արձանագրուելու: Այդ ատելութիւնը ստիպողական է, կառավարչական մեքենայութիւններով ստեղծուած: Եւ

եթէ այդ փոխադարձ թշնամութեան մէջ կայ մի ցանկալի կէտ, դա այն է, որ այդ ատելութիւնը շատ հեշտութեամբ կարող է քաղաքական նոր ցնցումների աղբիւր լինել, և տանել ժողովուրդը դէպի կռիւ՝ ընդդէմ այնքան զգուշի դարձած միապետութեան. . .

Այդ քաղաքական այլակերպութիւնը միայն հայերի շրջանում չէ կատարուած: Նոյնպիսի մի երևոյթ, թէև աւելի թոյլ կերպով նկատելի է վրաց ժողովրդի մէջ: Երբեմն վրաց հասարակութեան մէջ ուժգնօրէն հընչում էր իշխան Չավչավաձէի, Ակակի Ծերեթեթի և ընկերների կոչը, որոնց քաղաքական ամենամեծ հեռատեսութիւնը՝ հակահայկական քարոզն էր, և այն սերտ բարեկամութիւնը, որ ուղում էին պահպանել կառավարութեան հետ, այն էլ այնպիսի բախտախնդիրների միջոցով, ինչպիսին էր «բանաստեղծ» Ալիշէօ: Այժմ այդ օրինակ քարոզները հնչում են վրաց ժողովրդի ականջին անհաճոյ ձայնով: Նրանք այլևս չեն գրաւում, այլ վրդովեցնում են: Ցարերի կառավարութիւնը ծանր կերպով վերաւորեց 19-րդ դարի իր դաշնակցների սիրտը. — հալածեց վրաց լեզուն դպրոցից, եկեղեցիներից, ուսական ծիսակատարութիւնը ամբողջովին մտցրեց իվերական տաճարների մէջ, դրժեց իր քաղաքական դաշնագիրը, փակեց շատ դպրոցներ, քչեց երկտասարդ վրացիներին և այդ օրինակ «արկածներով» նախկին սիրոյ տեղ թշնամութեան սերմեր ցանեց. . . Եւ վրաստանի մէջ բուսած յեղափոխական խմբերը, այդ քաղաքականութեան շնորհիւ, իրենց առաջ կենսական պարտաւորութիւն ունին՝ նախկին սիրոյ աւերակների վրայ՝ կռուի և պայքարի դրօշակը պարզել. . . Այնտեղ էլ, երկկայ անձուէր ժողովրդի մէջ, երբեմն երբեմն հակահեղափոխական թունդ ձայներ են լսում, ձայներ՝ ընդդէմ ուսաց լեզուի, ուսաց ազդեցութեան. . . որոնք, իհարկէ շօվինիստական ու թեան նշաններ չեն, այլ հակակառավարչական ատելութեան դիւրմբանքի արտայայտութիւններ:

Թիւրք ժողովրդի մէջ այդ օրինակ երևոյթ դեռ չկայ, սակայն դժգոհութեան նշանները այնտեղ էլ երևում են, — մի քանի նոր կայծեր, ունէ շօջափելի առիթ, և քաղաքական հրդեհը այնտեղ էլ կը բռնկի, գուցէ և աւելի մեծ ուժով, որովհետև մահմետականութիւնը երբեք հաշտ աչքով չէ նայել քրիստոնեայ Ռուսաստանի տիրապետութեան տարածման Թիւրքիայի և Պարսկաստանի սահմանների վրայ:

. . . Ցասնիններորդ դարը սկսեց Միապետութեան յաղթական մուտքով դէպի Գովկաս: Քսաններորդ դարը սկսում է մի զօրեղ կուռով յաղթական Միապետութեան դէմ, որ տիրապետեց ամբողջ դար: Բաւական է այդ: Նրա բարիքն էլ տեսանք, չարիքն էլ: Ժամանակն է, որ նա յետ նահանջի ժողովրդական ըմբոստացման ու յեղափոխական զօրաբանակի դիմաց:

Է. ԱԿՆՈՒՆԻ

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀՆՈՒՍԻՈՐ ԵՒ ՄԵՐՁՍԻՈՐ ԱՐԵՒԵԼԻՔ Մ Ա Կ Ե Ռ Օ Շ Ի Ա

Եսպօնեան մի ջախջախիչ հարուած ևս տուց իր ինքնահաւան հակահեղափոխ. — Պօրտ-Արտուրը ընկաւ: Նիկօլայ 11-ը կորցրեց Խաղաղ ովկիանի վրայ իր իշխան

նութիւնը և, ամենայն հաւանականութեամբ, կորցրեց ընդմիջում Անցքը սովորականներից չէ, նա ունի համաշխարհային ծանրակշիւ կարևորութիւն:

Ցարիզմի «համալը», որ սոսկումի մէջ էր պահում ասիական աշխարհը և մասամբ նոյնիսկ Եւրոպան, խախտեց արիւնանների ու քարուքանդ եղած վիթխարի բերդում, որը հպարտ իշխում էր լայնարձակ երկրների վրայ...

Սարսափելի է պատահարը. չափազանց անողորմ փորձութիւնների է ենթարկուում գոռոզ, ինքնահաճ միապետութիւնը: Պորտ-Արտուրը գէթ Սեվաստոպոլի ճակատագիրը չունեցաւ. այնտեղ ցարիզմը յետ նահանջեց անգլո-ֆրանսիական միացած ուժերի առաջ. իսկ այստեղ... մի փոքրիկ ասիական պետութիւն է, որ հասցնում է ծանր հարւածը, — մի երկիր, որ դեռ երէկ մրափում էր նահապետական կուլտուրայի գրկում, անգիտակ արևմտեան քաղաքակրթութեան, անտեսած ու արհամարհած Եւրոպայից:

Ձարմանալի չէ, որ Պորտ-Արտուրի անկումը անսովոր շառաչում ունեցաւ ամբողջ աշխարհում, իսկ Ռուսաստանի մէջ յարուցեց կսկծալի ճիչերի մի սոսկալի ժխոր... նա չէր կարող միաժամանակ չցնցել և ասիական յետամնաց ցեղերին, չ'անդրադառնալ նրանց հոգեբանութեան վրայ: Մի վայրկեան նրանք, թերևս, սթափւեցին լեթարգիական քնից և ապշանքով դիտեցին փոքրիկ նիպոնների յանկարծական, աշխարհադրոգթութիւնը:

Նոր անսպասելի երևոյթ, հասարակագիտական տեսակէտից միանգամայն ուշագրաւ, անբացատրելի:

Եսպանականութիւնը սլավոնականութեան դէմ յարթական, — ահա հրահանգիչ իրողութիւնը: Բայց եսպանականութիւնը գալիս է Սիբիրից ոչ թէ ասիացու, այլ եւրոպացու կերպարանքով, թարմ, շարժուն, առաջագէտ: նա գալիս է քաղաքակրթութեան դասեր տալու անշարժ, քարացած Ռուսաստանին, այն Ռուսաստանին, որը յաւակնութիւն ունի դեռ Պետրոս Մեծի օրով մտած լինելու արևմտեան կուլտուրայի աւազանի մէջ, որը յաւակնութիւն ունի լուսաւորութեան ջահակիր լինելու նաև ասիական հօրիզոններում, բայց որը այժմ, փորձութեան օրերին, հանդէս է գալիս աշխարհի առաջ իր զազրելի մերկութեամբ, իր խայտառակ անկարողութեամբ՝ հասկանալու և կիրառելու ամենատարրական բարեխառնները իր վարչական մեթօդի, ներքին ու արտաքին քաղաքականութեան մէջ:

Այդ ցայտուն հակասութեան մէջ է սօցիոլոգիական ապշեցնող երևոյթը: Ղրիմի պատերազմը մի անողոր դաս էր, բայց եւրոպականութեան ծիրանի հագած ասիական բռնապետութիւնը չքաղեց դրանից հարկաւոր հրահանգները: Երկիրը շարունակեց քարացած մնալ Պօթեդօնօսցէլների ուժովի տակ և բռնակալութեան մեքենան անգամ չկարողացաւ գէթ այնպէս բարեփոխել, որ պատասխանէր արտաքին, գիշատիչ քաղաքականութեան պահանջներին, Ռուսիայի տարածման՝ դէպի հարաւ ու արևելք, — պահանջներ, որոնցով ապուշ բիւրոկրատիան ձգտում էր վարագուրել, մթնացնել, խեղդել ա յ ւ կ ար գ ի պահանջները, — ներքին ուժօրմների ստիպողական անհրաժեշտութիւնը:

Եւ ահա հետևանքը: Ռուս գիւլանագիտութիւնը, իր իսկ սեփական շահերի տեսակէտով, յայտնեց միանգամայն ստոր իր կոչումից և ծիծաղաշարժ՝ իր անձարութեան մէջ: նա շարունակ գրգռեց հակառակորդին, առանց չափելու նրա ուժերը և առանց իմանալու իր սեփական պատրաստականութեան հնարաւոր չափը:

Ռուս զօրավարներն ու ծովապետները միանգամայն արգահատելի կերպարանք ընդունեցին եսպանական առաջնորդների գիմաց, որոնք թէ իրենց հմտութեամբ և թէ արիութեամբ աշխարհի հիացմունքը շարժեցին:

Ռուսաստանը ջախջախեց ովկենանի վրայ. նրա նաւատորմի ողբալի փշրանքներն են միայն մնում այժմ: Բալտեան նաւաբաժինը, զրկւած գործողութեան իր յենակէտից՝ զուր, ծիծաղաշարժ պտոյտներ է անում... այն ինչ՝ ցամաքային զօրքն էլ գրեթէ բոլորովին շանս չունի յաղթելու:

Գէթ այժմ կը խրատուի... Հարիւր հազարաւոր մարդկանց ահաւելի կոտորածը և անպատիւ պարտութիւնները պիտի դրդեն արդեօք կոյր բռնակալութեանը և թուլամիտ վեհապետին՝ արձագանք տալ հասարակութեան բարձրագոյ պահանջին և մտցնել գէթ մի շարք անյետաձգելի, հիմնական ուժօրմներ... Այդ է որ կը տեսնենք: Առայժմ ասպարէզը տարտամ, հակասական շուկներին է. առայժմ յայտնի է միայն, որ «աստուածը նոր»՝ Նիկոլայը քուրմ-Պօթեդօնօսցեակից հրահանգուած, տրամադիր չէ մի նշանախեց անգամ զիջելու իր միապետական իրաւունքներից...

Թուում է միւս կողմից, որ կառավարութիւնը անցքերի անողոր տրամաբանութիւնից մղւած՝ հակամէտ է որոշ չափով գոհացում տալու սահմանադրական, ըմբոստ տարրերին և ներքին գործերի միխտարի պաշտօնում պահել քիչ թէ շատ ազատամիտ մէկին, — մի Միրսկի կամ մի Վիտտէ:

Թէ ո՞ր քաղաքականութիւնը ի վերջոյ կը գերակշռէ, թէ որքան յամառութեամբ Նիկոլայ I-ը կը շարունակէ պնդել իր աստուածատուր իրաւունքների վրայ, — դա յամենայն դէպս, կախած է նրանից, թէ որքան ուժգին կ'որոտայ յեղափոխական հրաբուխը...

Մ ե ր ձ ա լ ո ր ար և Ե Լ ք ու մ . . . միխթարական բան չկայ: Գուռը յուսահատեցուցիչ յամառութեամբ քաշքշում է մ ա կ ե դ օ ն ա կ ա ն ու է Ֆ օ Ր մ ն Ե Ր ի հարցը և մերժում է իրագործել նոյնիսկ պահանջների այն ռոնտոստ-ը, որ վաղուց առաջադրել է նրան աւստրո-ուսական համաձայնութիւնը: նա ոչ թոյլ է տալիս ակելացնել եւրոպական ժարդարմերիան խուռն, ալէկոծ վիլայէթներում, ոչ էլ ուզում է, որ տեղում գտնուած եւրոպացի ժանդարմները մտնեն ուէ շիման մէջ քրիստոնեայ ազգաբնակչութեան հետ:

Երկու վերահսկող պետութիւններն էլ առանձին փութկոտութիւն չեն ցոյց տալիս իրենց քայլերում, մանաւանդ Ռուսաստանը, որ բնաւ գլուխ չունի մերձաւոր արևելքի ինքիներեքի համար: Ձարմանալի չէ այդ տեսակ պայմաններում թիւրք կառավարութեան յանդուրձնեցքը ժողովուրդի ու յեղափոխականների նկատմամբ: նա այն աստիճան լրբացաւ, որ նոյնիսկ հրապարակ հանեց մի շրջաբերական, թիւրք, բուլղար ու յոյն լեզուով, Մակեդոնիայի բոլոր անկիւններում, որով ձգտում է ստեղծել այնտեղ Հայաստանում տիրող վիճակը Հետևեալ արտակարգ միջոցներն են ազդարարուում այդ շրջաբե-

րականով, արգելում է բացարձակապէս ամէն մէկին՝ դուրս գալ իր գիւղից և շրջել դաշտերում, արևը մայր մտնելուց յետոյ: Ստիպողական պարագայում անհրաժեշտ է լիազօրութիւն առնել տեղական իշխանութիւններէց: Զինւորական առաջնորդներին պատուիրում է հրացանի բռնել այդ հրամանի դէմ մեղանշողներին, որպէս «խառնակիչներին մեղակցողներին»:

Այդ յարաճուն խտուրթիւնները ազդում են արիւնակից Բուլգարիայի վրայ, որի կառավարութիւնը երբեմնապէս, մանաւանդ վերջերս, սուր դիտողութիւններ է անում Կ. Պօլսում և ակներև կերպով պատրաստում է պատերազմի...

* * *

Յեղափոխութիւնը իրօք զինադադար է հրատարակել Մակեդոնիայում, բայց վերջին ժամանակներս այնտեղ առաջացել է մի սոսկալի պատուհաս, — յոյն, սերբ ու բուլգար արշաւախմբերի փոխադարձ կատաղի յարձակումներն ու արիւնհեղութիւնները — որոնք, դժբախտաբար, սուլթանի ջրաղացին են միայն ջուր ածում և յաջս Եւրոպայի վարկաբեկ անում Մակեդոնիայի դատը:

Հիլմի փաշան, ինչ ասել կ'ուզէ, ամէն կերպ խրախուսում է ցեղերի այդ կռիւը և երկու պետութիւններից յայտարարւած՝ Միւրցտեգի տխրահռչակ ծրագիրը անզօր է դանւում հարկադրելու իր կամքը: Մի տարի եւրոպական հսկողութիւն — և արդիւնքը տակաւին անշօշափելի... Ահա ցաւազին իրողութիւնը: Եւ այդ միւսնոյն հետևանքն է եղել սուլթանահպատակ բոլոր երկրներում, որոնց համար այլևայլ ժամանակ, Եւրոպայի ճնշման տակ, ուէֆօրմներ են խոստացել, բայց այդ ուէֆօրմներն իրագործելու համար՝ բարձր կօմիսարներ նշանակել են միշտ սուլթանի կողմից, և սուլթանի մարդիկ — Ջեւադ փաշա՝ Կրէտէում, Շաքիր փաշա՝ Հայաստանում, Հիլմի փաշա՝ Մակեդոնիայում...

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Լ Ո Ւ Ի Զ Մ Ի Թ Է Լ

Մի աստղ մարեց յեղափոխական կանանց աշխարհում—ամենամեծը, ամենափայլունը: Լուիզ Միշէլ, հռչակաւոր «Վարմիր Կոյսը», գերեզման իջաւ 74-ամեայ զառամեալ հասակում, տանելով իր հետ բոլոր յեղափոխական մտածողների, նոյնիսկ յետոդէմ հակառակորդների յարգանքն ու հիացմունքը:

Աշխարհական «սրբերից» էր նա, որ իր գեղեցիկ, հմայիչ կեանքով սեփականութիւն է դառնում ոչ միայն Քրանսիայի, իր հայրենիքի, այլև բոլոր ժողովուրդների, ամբողջ տառապող ու երազող մարդկութեան: Նրա կեանքը մի դիւցազնեղութիւն էր, լի մրդկայող գըրլազներով, ուր բանտ, աքսոր և ամէն տեսակ հալածանքներ իրարու յաջորդելով, երկար տարիների ընթացքում տրորեցին նրա կանացի գոյութիւնը և սակայն չկարողացան խորտակել նրա կամքը, և նա միշտ մնաց անվկանդ, խանդավառ յեղափոխական, անշէջ հաւատով դէպի ժողովրդական Գործի յաղթանակը...

Արևմտեան կին-գրողների ու պրօպագանդիստների շարքում նա մի բախտաւոր բացառութիւն էր. Սէվէրինների ու Ցետկինների պէս նա չէր գոհանում լոկ խօսքի

ու գրչի մարզանքներով, այլ դրա հետ զուգընթացաբար մղում էր նաև գործի պրօպագանդը, նետւում էր ամենավտանգաւոր արկածների մէջ, բերում էր իր սիրած դատին իր բոլոր եռանդը, իր բովանդակ անձնաւորութիւնը:

Յեղափոխութիւնը վաղուց նւիրական պաշտամունք էր նրա համար, բայց նա լոկ տաքչուլու մի երազող չէր, կուսուցող, զարնելու արևստի սիրահար, այլ մի մոլեռանդ տնչացող ազատ ու երջանիկ ապագայի՝ թշառ, բազմատանջ մարդկային մեծամասնութեան, ամբոխի համար, որին նա սիրում էր մինչև բացարձակ ինքնամոռացութիւն:

Այդտեղ է «Վարմիր Կոյսի» ուժը: Նա յայտնի եղաւ դեռ 1871-ի ահաւոր անցքերի միջոցին, երբ պրօսացիների յաղթական արշաւանքի դիմաց Պարիզի Կօմմունան հպարտ բարձրացրել էր իր ըմբոստ գլուխը, ծածանեցնելով «սօցիալական հանրապետութեան» կարմրագոյն դրօշը: Լուիզ Միշէլ մէկն էր այն դժոխային, հերոսատիպ դէմքերից, որոնք գերագոյն ճգնաժամի օրերում առաջ մղեցին այդ զարհուրելի աշխարհասասան դաւադրութիւնը, ուղղած բուրժուազական տիրապետութեան դէմ...

Երկու ամաւայ հերոսական դիմադրութեան ընթացքում Լուիզ Միշէլ մարմնացած անձնւորութիւն էր, մի օր իբրև վերակապ ու գթութեան քոյր, միւս օր իբրև քարոզող, մտքերը վառող, միւս օր իբրև կուռղ, մարտիկների շարքում, բարրիկադների վրայ, ուր և վերջ ստացաւ...

Եւ երբ «Կոմունան» յաղթահարւեց, երբ հայրենակից կառավարութեան ձեռքով Պարիզը վերածւեց մի վիթխարի սպանդանոցի—այն ժամանակ հնչեց գերեզմանական խաղաղութեան մէջ «Վարմիր Կոյսի» սասանեցուցիչ անէծքը դաւաճան կառավարութեան հասցէին, որը զարգանդած կօմունիզմի ուրւականից, վագրի մոլեգնութեամբ նետւել էր հազարաւոր արիւնակիցների վրայ և, ի տես պրօսական զօրաբանակի, կատարել էր մի անօրինակ ողբերգութիւն...

Հերոսուհու նոյն անվեհերութիւնը մենք տեսնում ենք և զինւորական ատեանի առաջ, ուր փոխադրւեցին ողջ մնացած «Կոմունանները» և ուր Լուիզ Միշէլ, գլուխը միշտ բարձր, յանդուգն ու մոլեգին պատասխաններով շանթահարում էր դատաւորներին:

Աքսորի դատապարտւեց շատերի շարքում և ամբողջ 9 տարի անցկացրեց Նոր-Վալէդօնիայի արևակեղ խորշերում:

Կին-հերոսը չ'ընկճեց աքսորի տառապանքներից. նա ինքն էր սիրտ տալիս իր բախտակից երիտասարդներին, բաժանում էր նրանց հետ իր ունեցածը բացարձակապէս զրկում էր իրեն... Սակաւ չէ պատահում, որ կատաղի ատելութեան հետ մարդիկ կրում են իրենց ծոցում և կատաղի սէր ու կարեկցութեան զգացում: Ատելով ժամանակակից կարգերի ներկայացուցիչներին, Լուիզ Միշէլ անսահման ու անխառն սէր էր տածում դէպի բոլոր զրկւածները. ամբողջ լացող հալածական աշխարհը նրա պաշտամունքի առարկան էր:

Աքսորից վերադառնալով, նա նախկին թափով շարունակեց քարոզել անդադար պոյոտներ գործելով Քրանսիա, Անգլիա, Շվեյցարիա, ուր բազմամարդ միթիոններում արծարծում էր անիշխանականութեան գաղափարները: Նա կին-մարգարէի տիպարն էր, որ իր գաղափարական ֆանատիկոսութեան մէջ յաճախ ծայրայեղ քայլեր

էր անուս. այդպէս, 1884 թւին, նա կիսաքաղց ամբոխի զուլան անցած՝ պաշարեց հացագործի մի շարք խանութներ, ընդհարում ունեցաւ ոստիկանութեան հետ և այդ արկածի պատճառով չորս տարի ևս բանտ նստեց: 1888-ին Պարիզում արտասանած մի ճառի համար — դարձեալ չորս ամիս բանտ:

Անխո՛նջ, մոլեռանդ աշխատաւոր:

Կախարդիչ էին այդ անսովոր կնոջ ճառերը հրապարակական ժողովների մէջ, նոյնիսկ նրանց համար, որոնք չէին բաժանում նրա աշխարհայեցութիւնը:

1896-ի ամառն էր. Լոնդոնի միջազգային սօցիալիստական կոնգրէսը վերջանալուց յետոյ, հետաքրքիրների խումուն բազմութիւն — բոլոր ազգերի ներկայացուցիչներին — դիմեց դէպի անիշխանականների հոյակապ ժողովարարհը, ուր պիտի խօսէր Լուիզ Միշէլ: Մի շարք անիշխանական հեղինակութիւններից՝ Կրայպտկինից, Ռէկլիւից և ուրիշներից յետոյ, որոտընդոտ ծափահարութիւնների մէջ, բեմ դուրս եկաւ «Կարմիր Կոյսը» իր տիտանեան հասակով: Զէինք տեսել, որ հինագիտատօրը այդքան հմայիչ տպաւորութիւն գործէր: Եւ խօսքի ուժը չէր, որ շղթայած էր պահում ահագին հասարակութեան պատկառոտ ուշադրութիւնը — ոչ խօսքը միակերպ էր, մտքերը սովորական, անիշխանական Ֆրագէօլօգիայից մեզ կաշկանդողը խօսողի անձնաւորութիւնն էր, նրա անկեղծ ցասոււմը, նրա վառող հրդեհող տեմպերամենտը, նրա անզուսպ, թունոտ ատելութիւնը դէպի ժամանակակից սօցիալական կարգերը: Մեր առջև ծառայած էր ինքը տիեզերական վեշտը, իր բոլոր սկերով, ինքը ըմբոստացող նահատակութիւնը...

Եւ մինչև վերջին շունչը աշխատեց նա իր դատի համար, 74 տարեկան հասակում անգամ քարոզչական պայտաններ էր անում գաւառների մէջ, ուր նրա քայքայած առողջութիւնը ստացաւ, վերջապէս, մահառիթ հարածը:

Մքանչելն՝ դէմք, հազադէպ երևոյթ նոյնիսկ արևմտեան, լուսաւոր աշխարհում, — ո՛ր մնաց արևելեան կիսակիրթ երկրներում... Մինչև չբազմանան Լուիզ Միշէլները, թուում է, թէ դեռ երկար պիտի գործի մարդկային առաջադիմութեան անիւրը, մինչև իր բաղձալի շքանին հասնելը...
Ս. Վ.

Թ Ե Ր Թ Օ Ն

ԲԱՆՏԱՐԿԻԱԾ ԸՆԿԵՐՈՋ ՆԱՍԱԿԸ

Տառակաւան 6-ամեայ բանտարկուծիւնից նոր ազատուած մի ընկեր հաղորդում է մեզ իր տպաւորութիւնները եւ մի շարք իրողութիւններ, որ սիրով յանձնում ենք հրատարակութեան:

Սիրելի ընկերներ,

Եթէ անկարող եղայ իսկոյն գրել ձեզ, պատճառը այն է, որ դժւար էր ինձ մէկէնմէկ գրիչ ձեռք առնել. վեց տարւայ դժոխային պայմանները բռնադատեցին կամքս և առողջութիւնս քայքայելու հետ՝ վարժեցրին ինձ թիւրքերէն լեզուի ու ստիպեցին գրեթէ մոռանալ մայրենի լեզուս, որով դժւարանում եմ այժմ մտքերս արտայայտել: Ծիծաղելի դրութիւն... Ես, որ երբեմն այնքան զայրանում էի, լսելով ունէ հայի բերանից թիւրքական բառբառ:

Ջերմ ողջոյններ ձեզ և բոլոր նրանց, որոնք — հարա-

զատ կամ օտար — խօսքով եւ զէնքով մեր ապագայ յոյսերի կռիւն են մղում: Բայց մանաւանդ համարյունե՛ր մեր խնկելի նահատակների աճիւնին, որոնք հայրենիքի դարևոր նախատինքը իրենց արիւնով լազցին: Նահատակներ, որոնք ամէն տեղ յոյսեր ներշնչեցին, կենդանութիւն սփռեցին:

Ողջոյն և այն տարաբախտ ընկերներին, որոնք հեռու իրական կեանքից, բանտերի խորքերում իրենց օրերն են համրում, յոյսի ու տենչի մի զգացումով՝ ելնել ու շարունակել այն ուղին, որ կիսատ թողին բախտի ձախորդ բերմունքով: Բանտն ու կապանքները յեղափոխական գործի ալն են, նրանց ծանրութիւնը աւելի քաղցր ու հրապուրիչ է դարձնում ազատութիւնը...

*

Որքան կ'ուզեն, թող պնդեն մեր հակայեղափոխական տարրերը՝ թէ բռնութիւններն ու աղետները յեղափոխական շարժման հետևանք են... Ահա ձեզ Կիլիկիան, որ ըստ երևոյթին հանգիստ է, ուր հայ յեղափոխականի սոււերն անգամ չի երևում, և սակայն ինչե՛ր չեն կատարում նրա խորքերում, մութ և խոնաւ բանտերի մէջ...

1897-ի ընդհանուր ներումից յետոյ հարիւրաւոր հայեր, շատերը ականաւոր հարուստներից, կառավարութեան դաւերով ընկել են բանտ՝ Զէյթուն, Մարաշ Սիս, Այնթապ, Հալէպ, Հաճըն և այլն, և միայն երկար ժամանակ այնտեղ փտելուց և վերջին փարան թիւրքին կերցնելուց յետոյ՝ կարողացել են իրենց կաշին ազատել: Մանրամասնութիւններին յետոյ կը դառնանք: Այդ բոլոր բանտարկութիւնները կատարել են քաղաքական անւան տակ, թէպէտև ոչ մի նշան չուենն այդ անունը կրելու:

Երկիր ճամբելու համար՝ կենտրոնական քաղաքներում — Սերաստիա, Ատանա, Հալէպ և շն — ժողովում են պանդուխտ հայերին և միմեանց վրայ թափում բանտերի նեղ խուցերը, անհաց, անջուր, և ամբողջ շաբաթներ սպասեցնել տալուց յետոյ, բոլորին միմեանց կապելով, քշում են, Աստուած գիտէ, ուր... Կէսը տեղ չէ հասնում, հասնողներն էլ ամիսներից յետոյ, անսնունդ մնալուց կմախքներ են դառնում: Մարդ չէ կարող առանց արտասուքի նայել այդ թշուառների վրայ, որոնք առաջ են մղում փոշու ամպի միջից տկլոր, ոտաբորիկ... Մէկը եթէ նստել ուզենայ, միւսներն էլ նստելու են: Իսկ եթէ ուղեկցող ժանդարմը անխիղճ է...

Հալէպից այս կողմը, Քէփեր-Ալթան խանի մօտ, ես տեսայ այդպիսի մի խումբ, որի մէկ անդամը ամառւայ տօթին չգիմանալով՝ ուշաթափ ընկած էր, գոյնը սևացած, շրթունքները կապտած, աչքերի սևը կորսած: Արթին էր անունը, Զմշկածակցի, 18 տարեկան: Այդ գրութեան մէջ նա պիտի հասնէր մինչև Զմշկածակ: Ո՞վ էր հոգացողը... Երկու ձիաւոր ոստիկանների համար միւսնոյն էր, — թէկուզ երիտասարդը մեռնէր: Միւս արտօրականները աւելի լաւ դրութեան մէջ չէին, որ կարողանային օգնել: Մօտս մի շիշ կիտրոնի աղաջուր կար, գրի բերանը, աչքերը բաց արեց, պապակած էր: Մի քիչ խմեց, կեանք առաւ, բայց ի՞նչ վայրկենական զովութիւն... Աերջը, ընթերցող, հասկացիր...

Այո, «խաղաղութիւն» է այդ կողմերը: Խմբերով չեն կոտորում. մէկ-մէկ. դա «խաղաղութիւն» է... Փորձի համար անցէք գլխաւոր ճանապարհներից մէկով: Հեռուից

կը տեսնէք փոշու մէջ կորած խմբեր, 10-15 հայ, ծե-
րունի և մանուկ և նրանց ետեից 1-2 ձիաւոր ոստի-
կաններ: „հայրէ, թրէլի“ — ուրիշ խօսք չունեն:

Երկու տարի սրանից առաջ մի այդպիսի խումբ էին
տանում Ատանայից, Մարաշի վոյսով գեպի Խարբերգ:
Բազարընից անցնելու միջոցին սկսում են ծեծել խնդ-
ճերին. իսկ երբ հասնում են Աղ-Սու գետի կամրջին,
նրանցից երեքին ջուրն են թափում: Եւ խնդիրը իրենց
վոյս չծանրանալու համար, ոստիկանը յայտնում է
Մարաշում, թէ երեք հայերը, իր զէնքը խելով, փա-
խել են... Անցաւ սակայն մի քանի օր և Աղ-Սուի միջից
մի դիակ հանցին. մի քրտր գեպու վկայելու, թէ ինքը
տեսել էր, ինչպէս ոստիկանները հրացանի կոթերով
զարկին ու ջուրը նետեցին հայերին: Գիւրգը բանտարկեց
երկար ժամանակով... .

Սրանք հրապարակ ելած իրողութիւններն են,—հա-
րիւրաւոր նման ոճիրներ կատարոււմ են աչքերից հեռու,
մութ անկիւններում, ձորերի ու անտառների մէջ: Ինչէր
չեն անում Մարզուանի հրգեհի սարսափները, քանի՞
քանի տեղեր այդպիսի փորձեր են կատարուած, աղող կամ
անյաղող... .

„Յեղափոխականներ չկան, խաղաղութիւնը կատա-
րեալ է“: Ողբալի թիրիմացութիւն... Տաճիկը վճռա-
կան ձայնով հրամայում է մեզ մեռնել և հրամայը
ի գործ է դնում բոլոր կարելի ու անկարելի միջոցներով... .

Ա Մ Ս Ա Լ Ո Ւ Ր Ե Ր

* * *

Մեր խմբագրութիւնը եւրոպական մասնւէին հազարէց
հեռուեալ երկու հեռագիրները, ստացած երկրից.

Կ. ՊՕԼԻՍ, 23 դեկտեմբերի
(Սօֆիայի վրայով)

Թիւրք կառավարութիւնը մոր միջոց է հմարել՝ հայերի
դէմ կուելու համար: Դիարբէքի շրջանում թիւրք երի-
տասարդների մէջ, կառավարչական գործակալների շան-
քերով, կազմել են ահաբեկիչների խմբեր, վաթ ա ն-
փ էր վ էր անուումով, որոնց յանձնարարած է սպանել
կասկածելի հայերին: Այդպէս՝ Ստեփանեան ամուս հայը,
որ մոր էր արձակել իր երեքամայ բամաղակութիւնից,
ամնամամխիղճ կերպով խողիողեց, իր ընտանիքի հետ
միասին, վաթամփէրվէրների ձեռքով: Այդ մորաստեղծ
խմբերը սարսափ են տարածում ժողովրդի վրայ:

ՎԱՆ, 29 դեկտեմբերի
(Ուրմիայի վրայով)

Վիլայէթի իսլամ ազգաբնակչութիւնը զինում է կա-
ռավարչական շանքերով: Կարմկամի կողմերում յայտնի
արիւմարբու Մուսա բէկը մորակազմ շանքերակների գլուխ է
մշամակած: Վերջիմները բորբոքման մշաններ են ցոյց
տալիս: Վանից Կառկուս ուղարկուած գործը ահագին զըր-
կանքներ պատճառեց խաղաղ ժողովրդին: Տուրքի հաւա-
քումը կատարում է մամըլ չտեսնած բռնութեամբ և ծեծով:
Վերիմ-Կառկաում ծեծից 18 հոգի են հիւանդացել: Եղեկիս
զիւղում բռնաբարւած հի 5 կամայք: Հարստահարութիւն-
ները չափ չ'ունեն:

*

Հայ Յեղ. Դաշնակցութեան Ամերիկայի կոմիտէների տարեկան
Պատգամաւորական ժողովը հետեւեալ հետագին է ուղղե
Միացեալ Նահանգների Նախագահ Թէօդօր Րուվէլին:

Մեծարդայ տէր,

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ամերիկայի կոմի-
տէները տարեկան Պատգամաւորական ժողովի գումարած

Պատժընի մէջ, դեկտեմբեր 25, 26, 27, կը մատուցանեն ձեզի
իրենց սրտազին շնորհաւորութիւնները ձեր յաղթական
ընտրութեանը համար Միացեալ Նահանգներու բարձրագոյն
պաշտօնին, ինչպէս նաև իրենց անկեղծ գնահատումը այն
համակարգի ընդունելութեանը համար, որ ցոյց տւիք հայոց
կաթողիկոսի պատգամաւորներուն, և ձեր պատգամաւորին
ու հրապարակախօսութիւններուն մէջ այն փութկոտ վերա-
բերմունքին համար, որով մարդասիրական հարցանիշ մը դրիք
այն ժողովուրդներու վիճակին հանդէպ, որոնք թշուաւարած
են թրքական զարհուրելի բռնակալութեան տակ: Թայլ տւեք
մեզի, պ. նախագահ, խնդրել և յուսալ, որ ձեռքի տակ եղած
բոլոր օրինակ միջոցներով պիտի ջանայք ապահովել ամենա-
անհրաժեշտ բարենորոգումները, որ է կեանքի և պատուի
ապահովութիւն անտէր, անպաշտպան հայերուն, որոնք թըր-
քական ուժեղիմն տակ են թակալ են սխտեմաթիկ բնաջն-
ջումի Մեր ժողովը մեծ յայ ունի Միացեալ Նահանգներուն
վրայ, իբր պատգամաւորական ակտիւանի, որոնք հայերը մեծ բան
կը պարտին իրենց մտաւորական զարգացման և տուջարի-
մութեան համար և որոնք միշտ իրենց պիտի և անշահա-
խնդիր ձայնը բարձրացուցին ի նպատու բռնակալութեան
լուծին տակ ստուապող ժողովուրդներուն:

Այդ հետագին իբր պատասխան, արտաքին գործերի մինիս-
տրութեան փոխ-քարտուղարը, պ. Լուսիս, հետեւեալ նամակն է
ուղարկել Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Պատգամաւոր-
ական ժողովի նախագահին:

Տէր,

„Նախագահը այս նախարարութեան յանձնած է անցեալ
ամուս 27 թւակիր ձեր իրեն խրկած նամակը:

„Ի պատասխան, պարտիմ տեղեկացնել ձեզ թէ Նախա-
գահը իր շնորհակալութիւնը կը յայտնէ պատգամաւորական
ժողովի կոմիտէներուն, անոնց շնորհաւորումներուն համար՝
իր ընտրելուն առթիւ Միացեալ Նահանգներու Նախագա-
հութեան և անոնց արտայայտած գնահատումին համար՝ իր
հանրային այն գործերուն և ծաւերուն, որոնք յայտարար են
իր համակրութեանը հայ ժողովուրդին“:

*

Վերջին հեռագիրը Պետերբուրգից հաղորդում է
իշխան Գոլցիցինի հրաժարականը, կամ աւելի ճիշդ հրա-
ժարեցումը՝ կովկասեան կառավարչապետի պաշտօնից:
Իբրև նրա յաջորդ, Պարիզի լրագիրները տալիս են հե-
տեւեալ անունները՝ Մեծ իշխան Սերգէն, որ կը լինի նոր
չարիք Վովկասի համար, իշխան Սվետոսլով-Միրսկի,
հրաժարող ներքին գործերի մինիստրը, և իշխան Օլգեն-
բուրգի—երկուսն էլ անզօր դիմադրելու տիրող ուժեղիմն:

*

Վաթողիկոսական պատգամաւորութիւնը, որ երկու
մեծ հանրապետութիւնների նախագահների մօտ ընդուն-
ւելուց յետոյ գնաց Լօնդօն, Էտուարդ Թագաւորին ներ-
կայանալու համար, վերադարձաւ Պարիզ, առանց իր
նպատակին հասնելու: Անգլիական թագաւորը, ինչպէս
խմացանք տեղեակ աղբիւրից, „քաղաքական նկատում-
ներով“ անյարմար է դատել ա յ ժ մ ընդունել հայոց
եկեղեցու պետի ներկայներին: Պատգամաւորութիւնը
մտադիր է մօտիկ ապագայում անցնել Հոսոմ, Վիկտօր
Էմմանուէլին ներկայանալու համար:

*

Ամերիկայի Բօստօն քաղաքում սկսեց հրատարակել
անգլիներէն լեզուով, մի նոր ամսագիր, Armenia անունով,
ներւած հայկական դատի պաշտպանութեան: Հաճելի է
մեզ յուսալ, որ անդրատլանտեան հայասէրների աջակ-
ցութեամբ նոր հրատարակութիւնը կը կարողանայ ոգևո-
րութեամբ ծառայել ծրագրած նպատակին:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՐԵՒՍՏԵԱՆ ՔԻՒՐՈՆ ստացած է՝

Բողոքատու. — Դրամ՝ կովտէն 12,000 ֆրանք:
Անգլի. — Լծողնի Ալպեան կովտէն 53. ֆր. 50 սանտիմ:
Բողոքատու. — Փիլիպէի «Արամեան» խմբէն 100 ֆրանք:
Համազումար 12,153 ֆրանք 50 սանտիմ:

ԲԱԿԱՆԵԱՆ ԿԵՂՐ. ԿՈՒՄԻՏԵՆ՝

ՈՒՌՄԱՆԻԱՅԻ «Դանուր» կովտէն 1904 թ. ապրիլ, մայիս եւ յունիս ամիսներուն. —

Թ. քաղաքի խումբերէն՝ Անդրանիկ 21. 65 ֆրանք, Սեդրո-Աղբիւր 17. 20, Հրայր 12. 35, Պատանի 3, Նւիրատուիթիւն 5 ֆր.:

Ս-ի քաղաքի խումբերէն՝ Արարք 34 ֆրանք, Կարին 30, Սեպուհ 31. 50, Վարագ 39, Սեդրո-Աղբիւր 27, Նոր-Ղար 42, զին. Գայլ 27, զին. Արամ 30, օժան. Նէմրութ 21, օժան. Հաւուլ 47, օժան. Մասիս 41, օժան. Ջինասէր 13, օժան. Տրդատ 21, օժան. Փէղայի 21, օժան. Տարան 41, զին. Արարատ 28, Վարդան Մարգարեան 10, Ջըմաղէն ամսավճար 1903 ապրիլ 1-էն մինչեւ մարտ 31 ին 12, Թ. քաղաքէն 61. 20 ֆր. Գումար 1,189 ֆրանք 45 սանտիմ:

Կալաքի խումբերէն՝ Ժերունի 100 էվ, Տարոն 50, Արծիւ 30, Ոմս քարեղար Քոջանցի 40 էվ: Պրայէլի ենթանդ-միտէն՝ Տետեւեալ խմբերէ՝ Առիւծ 74 ֆրանք, Գուրգէն 73, Տարոն 64, Ագուլ 76, Կարմիր Լեռ 70, Նիհար 65, Անդրանիկ 70. 85, Եփրատ 66, Թորոս 74 ֆրանք:

Բողոքատուի կովտէն՝ Արաուլ խմբէն 20 էվ, Պետո խմբ. 50, Տէնօր խմբ. 93, Խամասօր խմբ. 28, Տիկմանց Սոսի խմբ. 14, Շաքէ խմբ. 8. 50, Վրէժ խմբ. 8, Հայկ Արմէն 5: Գումար 226. 50 էվ:

Համազումար 2101. 50 ֆրանք եւ 226. 50 էվ:

ԺԱՏ ԿՈՒՄԻՏԵՆ՝

1904 թ. հոկտեմբերի 4-ից մինչեւ նոյեմբերի 6-ը. —
Նօւ. 38-ով Պոքզով խմբ. 28 ուրբի, Նօւ. 39-ով Ջաւէնի հանգ. մեծ տօնավաճառ. Նօւ. 66 թերթ. 282, «Առատի» խմբերից՝ Կրակոտ 8. 50, Հայկազուն 16. 83, Փլատի խմբերից՝ Պետո 14. 25, Ովսանայ 66, Քեռի 16. 70, Արարատ 17, Արարատի հանգ. եւ երկու ձեռք սպիտ. 9. 77, տիկ. Ն. եւ օր. Ն-ի եւ այլոց ձեռն. վիճակախաղ 383. 40, Մուրհակ խմբ. 50, Բուժարանի խմբերից 100, Վիճակախ. ապտիկը 2, Մժեղից կնքած թերթով 10. 60 ուրբի: Գումար 1,401 ուրբի 5 կօպէկ:

ԱՊՈՒՈՒՄ ԿՈՒՄԻՏԵՆ՝

1904 թ. սեպտեմբերի 1-ից մինչեւ նոյեմբերի 1-ը. —
Ս. 2, 10 ուրբի, Դ. Դ. 6, Ա. Դ. 6, Յ. Գ. 8, Ծ. Դ. 8, Ս. Գ. 10, Յ. Ա. 3, Բ. Ս. Դ. 10, Դ. Ա. 10, Կ. Տ. Ա. 2. 2. Ա. 10, Մ. Ա. 6, Հ. Բ. 4, Գ. Ա. 4, Ս. Տ. Գ. 3, Խ. Գ. 4, Ն. Գ. 2, Հ. Գ. 3, Ա. Ա. 2, Մ. Ա. 2, Վ. Ն. 4, Ծ. Դ. 10, Ն. Օ. Կ. Գ. 4, Ծ. Դ. 10, Մ. Դ. 4, Ա. Մ. 6, Ա. Մ. 6, Ա. Ս. 4, Լ. Գ. 2, Բ. Ա. 2, Բ. Ա. 2, Բ. Տ. Ա. 3, Մ. Ա. Ս. 3, Ա. Դ. 2, Թ. Ա. 2, Ա. Պ. 10, Ա. Օ. 4, Հ. 1, Կ. Յ. 3, «Ս-կ» 4, Թ. Յ. 2, Լ. Տ. Գ. 2, «Վ-սկ» 2, Ա. Պ. 2, Պ. Մ. Ա. 4, Գ. Ա. Ա. 2, Բ. Ա. 4, Ա. Ա. 2, Մ. Փ. Փ. 3, Դ. Գ. 4, Լ. Շ. 4, Ա. Շ. 4, Ա. Ա. 4, Մ. Ա. 2, Մ. Ա. 6, Գ. Ծ. 4, Գ. Ծ. 4, Ն. Բ. 3, Թ. Գ. 2, Մ. Ա. Տ. 3, «Լոն» 2, Լ. Ա. 2, Հ. 2, Բ. Ա. 1, Կրացի 0. 60, Գ. Ա. Ծ. 1, Ա. Ա. 1, Դ. Տ. Բ. 1, Ս. Պ. 1, 2. Ա. 2, Մ. 2, Բ. Բ. 1, Գ. Վ. 1, Ծ. Գ. 3, Տ. Մ. Բ. 1. 50, Ա. Դ. 3, Դ. Ա. 1, Գ. Մ. 3, Ս. Մ. 2, Ծ. Ա. 3, Ս. Ա. 1. 50, Բ. Օ. 50, Կ. Բ. 1, Բ. Լ. 1, Բէկը 1, Վ. Ա. 1, Շ. Ա. 1, Բ. Լ. 1, Բ. Տ. Մ. 2, Ա. Ա. 1, Ս. Ա. 1, Հ. 1, Գ. Ծ. 0. 50, Կ. Կ. 1, Մ. Ծ. 1. 50, Ա. Ա. Դ. 1, Գ. Ն. 3, Ա. Դ. 1, Գ. Ա. 20, Բ. Լ. 10, Գ. ը 6, Ա. Օ. 4, Տ. Մ. Գործ. 6, Տ. Մ. Ն. 20, Բլրագէն Գ. Անդրանիկ եւ Հրայր խմբերից 100, պր. Դումա-ից 2000, Սեմ. Երեկոյթից 47. 40, ամառ համերգից 97, Հրայր խմբ. 11, Անդրանիկ խմբ. 27, Մարգաւ 25, Մազիս եւ Սէր 60, Գործ խմբի Թու. -ի յիշատակին տւած 270, Նպատակ խմբ. 100, Քնար 10 ուրբի: Գումար 3,156 ուրբի 50 կօպէկ:

Ս. Բ. -ի ԿԵՂՐ. ԿՈՒՄԻՏԵՆ՝

1904 թ. փետրարի 1-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը.
Նօւրբ 13՝ 4. 30 ուրբի, Նօւ. 14՝ 3. 20, Ն. 8՝ 5, Ն. 3՝ 2, Ն. 6՝ 33, Ն. 7՝ 5. 45, Ն. 8՝ 12, Ն. 13՝ 2՝ 3. 50, Ն. 13՝ 2՝ 2. 55, Ն. 20՝ 5. 50, Ն. 16՝ 6, Ն. 12՝ 9, Ն. 7՝ 1. 75, Ն. 13՝ 2՝ 3. 70, Ն. 13՝ 2՝ 0. 40, Ն. 16՝ 1. 10, Ն. 3՝ 41. 70, Ն. 6՝ 22. 21, Ն. 30՝ Նոր մանուկ խմբ. 20, Հրաբուրդ խմբ. 11, Նօւ. 17 խմբ. 10. 90,

Պահանջ խմբ. հին հաշիւ 39. 80, Հիզան Պայծառ խմբ. 15. 50, Կանանց Կարինէ խմբ. 21, Նօւ. 68 խմբ. 10, Նօւ. 60՝ 6, Հիզան Պայծառ խմբ. հին հաշիւ 28, Նօւ. 33 խմբ. 7. 20, Ն. 34 խմբ. 2. 40, Ն. 61 խմբ. 5, Ն. 41 խմբ. 4. 30, Ն. 42 խմբ. 2, Ն. 43՝ 1. 20, Ն. 17՝ 3. 10, Մեծ քաղ. աշակ. միութ. միւլ 100, Կոնքեցի Խէչոյի միջոցով 10, Մեքենայից 10, հարսանիցից 3. 15, Կարինէ խմբի միջոցով 30, Նօւ. 62 խմբ. 3. 35, Կոռնիկ խմբ. Գուզարաց շրջանի միջոց. 33, Արշալոյս խմբ. 100, Ն. 12 խմբ. 6, Ն. 12՝ 2՝ 11, Ն. 17՝ 8. 50, Ն. 19՝ 3, Ն. 44՝ 1. 50, Ն. 45՝ 2. 19, Ն. 11՝ 5, Ն. 20՝ 5. 30, Ն. 16՝ 4. 50, Ն. 21՝ 54, Ն. 58՝ 5, Ն. 59՝ 7, Ն. 53՝ 4. 70, Ն. 52՝ 4. 70, Ն. 13՝ 3. 40, Ն. 63՝ 10, Մեքենայից 1. 50, Նօւ. 12 խմբ. 45, հանգանակ. թերթ Ն. 175՝ 5 ու:
(Հարունակելի)

Տեղի սղուծեան պատճառով ստիպւեցանք «Դրօշակի» յառաջիկայ համարին յետածել հրատարակուած իւր Ոսկանապատի և Վասպուրականի Կ. կօմիտէներու, Ոսկանաքի, Նախահանգստի կօմիտէներու և Սօֆիայի ենթակօմիտէի նւիրատուութեանց ցանկերուն:

Գ Լ Խ Ա Տ Ո Ւ Մ

Երկուշաբթի, դեկտեմբերի 5/18-ին, Խարբերդի մէջ, դահլճների ձեռքով հրապարակով գլխատւեցին երկու Հայ երիտասարդներ՝ սեբաստացի Յակոբ և Լ. Գարահիսարի Յարէթ Թէվէքէլեան, որոնք մեղադրուած էին մէկ քիւրդ աղայի և մէկ թիրք ոստիկանի սպանութեան մէջ, Աշանու: Երկու երիտասարդներն էլ նահատակւեցին արիւարար:

Տ Ե Ռ Օ Ր

Հ. Յ. Դաշնակցութեան Վասպուրականի Կենտրոնական կօմիտէի վճռով տէնօրի ենթարկւեցին՝
1) Լեռի գիւղի ուս Միւրօ, իր յամուզմ և համրա-ծանօթ մատնութեան համար:
2) Փօլիս Միլիթար, իր գազանայիմ և դաւա-ճամ գործերի համար:
3) Փօլիս Մուրադ էֆէմտի, մատնիչ-լրտես Սեդրո-Աղբիւրի ժամանակ և ներկայումս էլ գաղտնի գործակալ Հայոց-Ձորում:
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿԵՆՏՐ. ԿՕՄԻՏԵ

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Է. ԱԿՆՈՒՆԻ


Գ Է Պ Ի Կ Ր Ի Ի

Բողկացած 275 երեսից, նւիրած եկեղեցական կալ-ւածների յափշտակութեան և կովկասահայերի վերջին շարժումներին:

Գիւմը Եւրոպայում՝ 2 ֆրանկ, Ամերիկա՝ կէս դօլար Կովկաս՝ 1 ուրբի:

Գիւմը «Դրօշակի» խմբագրութեան

Մեր խմբագրութեան Հասցէն՝
Rédaction du «DROSCHAK», Genève (Suisse)



ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԲՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ի Ր Ն Ե Ր

Պետերբուրգ, 5 | 18 յունվարի

Բանւորական շարժումը սկսեց Պուտիլովի գործարանից և հետզհետէ տարածւեց միւս գործարաններում: Ստիեգլից գործարանի բանւորներն ևս, թւով 8 հազար, միացան գործադուլին: Կրկնք պահանջում են 8 ժամեայ աշխատանք: Խօսք կայ և քաղաքական ըէֆորմների մասին:

Պարիզ, 6 | 19 յունվարի

Պետերբուրգում սպասւում են լուրջ դէպքեր: Գործադուլին մասնակցողների թիւը կարող է հասնել 100 հազարի: Առավարութիւնը, երկիւղի մէջ, շտապում է միջոցներ ձեռք առնել: Աստիկանութիւնը ոտքի վրայ է: Զօրանոցներում զինւորները՝ պատրաստ վիճակի մէջ: Յատուկ միջոցներ են ձեռք առնւած Չմերային պալատը պաշտպանելու համար, ուր խմբւած և ապաստանած է կայսերական ընտանիքը:

Պետերբուրգ, 6 | 19 յունվարի

Այսօր տեղի ունեցաւ բանւորների մի մեծ ժողով մասնակցութեամբ յեղափոխական խմբերի: Ժողովը մերժեց այն ծրագիրը, որով առաջարկւում էր՝ ոչնչացնել կառավարական կազմը ամբողջապէս: Ընդունեց մի առաջարկ, որի նպատակն է պահանջել մամուլի և խօսքի ազատութիւն:

Պետերբուրգ, 7 | 20 յունվարի

Գործադուլին մասնակցող բանւորական բոլոր խմբերը պատրաստել են մի խնդրագիր՝ ուղղած կայսրին, որով պահանջւում են՝ վերջ տալ անարդար ճնշումներին, ազգաբնակչութեան վրայ ծանրացած թշուառութեան, ինչպէս և կապիտալիստների հարստահարութեան: Բանւորների գլխավոր պահանջները հետևեալներն են՝ 1. Անհատի ապահովութեան երաշխաւորութիւն: 2. Խօսքի ազատութիւն, համախմբելու իրաւունք, խղճի ազատութիւն: 3. Պարտադիր ուսում՝ պետութեան ծախքով: 4. Ժողովրդական ներկայացուցչութիւն, գաղտնի ընտրողութեամբ: 5. Միասնորեն պատասխանատուութիւն: 6. Հարկային սիստէմի հիմնական բարելաւում: Խնդրագիրը յատկապէս բանւորների համար պահանջւում է՝ 8 ժամեայ աշխատանք և բանւորների ապահովագրութիւն:

Պետերբուրգ, 7 | 20 յունվարի

Գործադուլը և յուզումները արագորէն տարածւում են: Սոն, Գալլի, Կալիբկին և այլ շատ գործարաններ փակ-

ւեցին: Մտաւորական շրջանները մասն ունեն շարժման մէջ: Լուր կայ, որ 100 հազար բանւորներ պատրաստւում են մի ցոյց՝ պալատի դիմաց, բանւորական մի ուղերձ՝ ուղղած թագաւորին, վերջանում է այս խօսքերով: «Խղճացիր մեզ, թող որ ապրենք. եթէ դու մեզ պահես այժմեան վիճակի մէջ, մենք գերադասում ենք մեռնել»: Հաստատւում է, որ Զօրհնէքի օրը Չմերային պալատի վրայ թնդանօթ արձակելը քաղաքական բնոյթ ունի: Ներքին գործերի և Ֆինանսների մինիստրները հրաժարեցին ընդունել գործադուլ անողների ներկայացուցիչներին: Կարծում են, որ այդ մերժումը շարժմանը կըտայ հսկայական կերպարանք: Լուր կայ, որ երկու օրից յետոյ ընդհանուր գործադուլ պիտի յայտարարւի: Բանւորական մի քանի խմբեր Աստիկանի-Օստրովում արդէն սկսել են ցոյցեր անել: Զօրքը անգլուխեան նշաններ է ցոյց տալիս:

Լոնդոն, 7 | 20 յունվարի

Չինարանների մէջ գործադուլը ընդհանուր կերպարանք է ընդունում: Կարծում են, որ շուտով անկարելի պիտի լինի պաշտօնական թղթերի առաքումը շարունակել: Աճուած է կիրակի օր քննել Չմերային պալատը, պահանջել որ ցարը երևայ ժողովրդին և անձամբ ընդունի բանւորների ուղերձը: Բանւորները ստում են. «Մենք պատրաստ ենք մեռնել պալատի առջև և մինչև վերջին րոպէն պիտի պահանջենք, որ կայսրը դուրս գայ և լսի մեզ»: Աստիկանի-Օստրովի մէջ ընդհարումներ տեղի ունեցան գործաթողների և դեռ աշխատող բանւորների միջև: Բաղաբի մի քանի կէտերում կէքտրական լուսաւորութիւնը ընդհատւած է: Աստիկանական իշխանութիւնը հրատարակեց մի շքաբերական, որով արգելւում է փողօցային համախմբումները: Շատ սպարաններ չեն բանում: Կարծում են, որ վաղը լրագիրները անկարող կը լինեն լոյս տեսնել: Մինչև ուրբաթ երեկոյ փակւած գործարանների թիւը 195 էր: Մոսկովայից այստեղ հասաւ մի պատգամաւորութիւն, որը եկել է խնդրելու կայսրին՝ վերջ տալ պատերազմին, որ սպաւնում է կործանել ամբողջ Ռուսաստանը:

Լոնդոն, 7 | 20 յունվարի

Ամբողջ պահակազօրքը ոտքի վրայ է: Գազի գործարանը, ինչպէս և պետական բանկը զինւորական հրակողութեան ներքոյ է: Մայրաքաղաքի մեծագոյն մասը ընկղմւած է խաւարի մէջ: Ահագին ջանք են թափում՝ ելէքտրականութեան մի քանի գործարանների աշխատանքը վերսկսելու համար: Չմերային պալատի շքաբերական պաշտպանելու համար՝ ոտքի են հանւած

զօրքը և ստիկանութեան յատուկ գնդեր: — Կիրակի օրը տեղի ունենալիք ցոյցը մեծ մտատանջութիւն է պատճառու: Աւրիշ քաղաքներից եկած լուրերը հաստատում են, որ յուզմունքը սաստկանում է:

Պետերբուրգ, 9 | 22 յունւարի

Առաւօտեան 10 ժամին, 15 հազար բանուոր, ահագին խուճապ կազմած, շարժւեցին դէպի քաղաքի կենտրոնը, սակայն ահագին զօրախուճաբը հանդէպ դուրս գալով, փորձեց արգելել: Կօզակների մի վաշտ, սրերը քաշած, յարձակում գործեց: Բանուորները փոքրիկ խմբերով շարունակում են գնալ դէպի կենտրոնական կէտերը: Տները դռները փակ են: Շատ աներում, ներքին յարկի պատուհանները տախտակով ամրացրած են: Շարժումը սպառնական կերպարանք է առնում: Մի քանի թաղերում երթևեկութիւն չկայ այլևս: Կամուրջները բռնւած են զօրքով: Յերեկայ 12 ժամին Չմերային պալատը տանող գլխաւոր անցքերը ամբողջապէս բռնւած էին: Ալէքսանդրեան այգու մօտ զօրքը բանուորական խմբի առաջը կտրեց: Գապօնի, երկու հոգեւորականների ուղեկցութեամբ, երեւոյ պալատական հրապարակի վրայ, որը բանուորների ժամադրավայրն էր նշանակւած ժամը 2-ին: Շարքերը ստարանում են: Կէսօրից 50 րոպէ անցած՝ զօրքը հրաման ստացաւ առաջ քայլել: Հեծելազօրքը սրերով յարձակում գործեց մօտ 10 հազար ամբօխի վրայ: Շատ վիրաւորներ կան: Աւելորովի հրապարակի վրայ զօրքը երեք անգամ հրացան արձակեց դէպի բանուորները: Կարձեալ բաւականաչափ վիրաւորներ: Ամբօխի գրգռումն ահագին է: Աւելի ժամը 2-ին, ահագին բազմութիւնը շարժւեց դէպի Չմերային պալատը՝ ներս խուճելու և ուղերձ տալու մտադրութեամբ: Զօրքը հրացանի բռնեց առաջին կարգերը: 150 հոգի սպանւած, բազմաթիւ վիրաւորներ: Սրան հետեւեց խոշոր ընդհարում զօրքի և բանուորների միջև: Կէս ժամ յետոյ ամբօխը քաշւեց հրապարակից, և զօրքը շարունակում էր հալածել անզէն խուճաբը, անգութ խտուրթիւնով: Արիւն և դիակներ շատ փողոցներում: Ամբօխը թշնամական ցոյցեր է անում օֆիցէրների դէմ: Բանուորները վճռել են դիմադրութիւն ցոյց տալ Աստիլեվսկի-Օսարովում, ուր բարբարոս և անմարտ են շինած մի քանի կէտերում: Վիրաւորները աւելի շատ են, քան կարծում էին: Գապօնին նոյնպէս վիրաւորւած է: Լուր է պտտում, որ սպանւածների թիւը 2 հազարից անցնում է: Զօրքը կոտորած է անում:

Լոնդոն, 9 | 22 յունւարի

Քաղաքի զանազան ծայրերից հրացանաձգութեան ձայներ են գալիս: Մի քանի կէտերի վրայ խոշոր հրդեհներ սկսւեցին: Լուր կայ, որ մի գեներալ մահացու կերպով վիրաւորւել է ամբօխի ձեռքով: Շատ բանուորներ այժմ դուրս են գալիս զինւած: «Ֆերմա» գործարանը կրակ տրեցաւ բանուորների կողմից: Զօրքի ձեռքով սպանւածների մէջ կան և երեխաներ, որոնք խաղալիս են եղել հրապարակի վրայ, նոյնպէս և կանայք: Երեկոյեան դէմ լուր տարածեց, որ մեծ իշխան Սերգէյի դէմ սպանութեան փորձ եղաւ: Ազգաբնակութիւնը ծայրայեղ յուզման մէջ է: Շատ ընտանիքներ փախչում են Պետերբուրգից: Պաշտօնական մի քանի շրջաններում այն կարծիքի են, որ սա ընդհանուր յեղափոխութեան նախանշանն է: Կարեւորագոյն դէպքեր են սպասուում:

Պարիզ, 10 | 23 յունւարի

Յարը Չմերային պալատումը չէ և շարժման սկզբին արդէն փախել էր Յարսկօէ-Սէլո: Լուր եկաւ, որ կիրակի երեկոյեան ցարը այնտեղից էլ փախուստ տուց: Կարծում են, որ կայսրը և կայսրուհին իրենց երեխաներով վճռել են հեռանալ Պետերբուրգից, յեղափոխական փոթորիկներից ազատ մնալու համար: Կարծողներ կան, որ Նիկոլայ Բ. կապաստանի Լեվադիա, կամ գուցէ և փախչի արտասահման: Մի քանի թղթակիցներ պնդում են, որ սպանւածների թիւը 2,500 է, իսկ վիրաւորւածներինը 8 հազարից աւելի: Պաշտօնական շրջաններում թագնում են իրողութիւնը և ուզում են հաւատացնել, որ սպանւածների թիւը 500-ից չէ անցնում:

Պետերբուրգ, 10 | 23 յունւարի

Ըստսոսմբների մի խումբը փորձեց արշաւել դէպի Յարսկօէ-Սէլո, սակայն զօրքը նրան յետ մղեց, մի արևնահեղ ընդհարումից յետոյ: Շատ բանուորներ սպանւեցին: Փողոցում պատահած զինւորականների դէմ ամբօխը կատաղութիւն է ցոյց տալիս: Մէկ գեներալ և մի քանի օֆիցէրներ, որոնք անցնում էին կառքով, դուրս հանւեցին իրենց կառքերից. ամբօխը գոռում էր. «դուք աւելի քաջ էք անդէն մարդոց դէմ, քան Պօրտ-Արտուրի մէջ: Մարդասպաններ»: Մայր-թագուհու պալատի պատուհանները ջարդւեցին: Լրագիրների խմբագիրները նոր ժողով գումարեցին և վճռեցին գրաքննական խրատութիւնների առիթով՝ բողոք ուղարկել կառավարութեան:

Պետերբուրգ, 10 | 23 յունւարի

Սրտաձիկ են տեսարանները: Կանայք և երեխաներ ողբում են իրենց նահատակ ամուսիններն ու ծնողները: Անթիւ տների մէջ տիրում է սուգ: Հասարակութիւնը միաբերան յանդիմանում է կառավարութիւնը, որ շնորհիւ իր անընդունակութեան և բիրտութեան, խաղաղ ցոյցը դարձրեց ապստամբութիւն և ապա կոտորած: «Կորչի՛ միապետութիւնը, կորչի՛ պատերազմը», հնչում է ամէն կողմից: Այսօրւան օրը մի անկում է կառավարութեան և զօրքի համար: Շատ տեղ զինւորները հրացանի բռնեցին ժողովրդին՝ առանց նախօրօք զգուշացնելու: Յրանսիական դեսպանատան առջև մի խումբ անցորդներ՝ կանգնեցրին մի օգոստափառ անձնաւորութեան կառքը, գոչելով. «Մարդասպան, ծունկ չօքիր և ներողութիւն խնդրիր»: Օգոստափառ անձը հագիւ կարողացաւ փախուստ տալ, երեսի թուքը սրբելով: Մեծ իշխանները փախել են մայրաքաղաքից և ապաստանել Յարսկօէ-Սէլո: Պալատական շրջաններում երկիւղն ու ահը անսահման է:

Պետերբուրգ, 10 | 23 յունւարի

Մի վաշտ, որին հրամայւած էր ճանապարհ ընկնել Իրգա՝ խառնակութիւնները զսպելու համար, հրաժարւեց և յայտարարեց, որ անկարող է հրացան արձակել ժողովրդի վրայ: Տպաւորութիւնը զօրեղ է: Լուր կայ նոյնպէս, որ Յարսկօէ-Սէլոյի մէջ երկու վաշտ կուրի են բռնել միմեանց հետ: Յեղափոխական մտքերի թափանցումը զօրքի մէջ ստիկում է պատճառում կառավարութեան: Շարժման մասնակցողները սկսել են գործ դնել դինամիտ և ուռւբեր:

Մոսկվա, 10 | 23 յունւարի

Յուզման և գործադուլի նշաններ են երևում Մոսկվայի բանուորական շրջաններում: Պետերբուրգից եկած

լուրերը սոսկում ազդեցին այստեղ: Բօրսան կանգ է առել: Երկիւղ են կրում, որ ամսի 26-ին մեծ ցոյց տեղի կունենայ: Տեղական իշխանութիւնը շրջաբերականներ տարածեց՝ հրաւիրելով ժողովուրդին չհամախմբել փողոցներում: Գրգռումը աւելի սաստկացաւ Սեւաստօպօլից եկած լուրերի պատճառով: Աւստրիական նաւատորմի նաւասահները այնտեղ ապստամբութեան ցոյցեր են սկսել: Մոսկվայի բանւորները իրենց յայտարարեցին համերաշխ՝ Պետերբուրգի շարժման հետ: Հինգշաբթի օր սպասում է ընդհանուր գործադուլը:

Լօնդօն, 11 | 24 յունւարի

Մի քանի լրագիրների հեռագիրներին նայելով՝ Ֆինլանդիայում ապստամբութեան պատրաստութիւններ են տեսնում: Շարժման մասնակից են Սենատի մի քանի անդամներ և ազնականութիւնը: Սետտերեցկ՝ 1,800 բանւորներ յարձակում գործեցին կառավարական զինագործարանի վրայ և գրաւեցին մեծ քանակութեամբ հրացաններ:

Պարիզ, 11 | 24 յունւարի

„Ստանդարտ“ նաև պատրաստ կանգնած է ցարին և իր ընտանիքին, հարկաւոր դէպքում, կօպէնհագէն փոխադրելու համար: Պետերբուրգում չգիտեն թէ իսկապէս որտեղ է գտնուում կամ ո՞ր է թագնւած Նիկօլայ Բ.: Մի քանի օր պալատից պալատ թափառելուց յետոյ՝ թագաւորը այսօր առաւօտեան անսպասելի կերպով մեկնեց Յարսկօէ Սէլօլից: Ասում են, որ մտադիր էր ապաստանել Պետերհօֆ, բայց մայրը խորհուրդ տւեց գնալ Գատչինօ: Յերափոխական շրջաններում՝ Գատչինօ փակեցելը համեմատում են Լուի XV-ի Վարէն փակեցելու հետ:

Պետերբուրգ, 11 | 24 յունւարի

Արուարձաններում յեղափոխական խմբերը ուժեքը նետեցին զինւորների վրայ: Ընդհանուր կարծիք կայ, որ եթէ ամբողջ զինւած լինէր, ահագին ջարդ կը տար զօրքին և կ'աջողէր ձեռք գցել Չմերային պալատը:

Լօժ, 11 | 24 յունւարի

Երկուշաբթի օր ծանր խառնակութիւններ տեղի ունեցան Լօժի փողոցներում: Հինգ հազար բանւորներ կարմիր դրօշակ պարզած, պտտեցին քաղաքը: Ոստիկանութիւնը վախեցաւ դիմադրել: Չօրքը միջամտեց: Բազմաթիւ վերաւորներ և սպանւածներ: Բանտարկութիւններ են սկսւած:

Պետերբուրգ, 12 | 25 յունւարի

Ներքին գործերի մինիստրը հեռագիր ստացաւ, որ Օդէսսա, Խարկօվ, Րիգա, Սեւաստօպօլ, Վիշնիեվ և Վարշավա երկիւղալի յուզում է տիրում: Սպասում են բուռն ցոյցեր: Սարատօվում երկաթուղային բանւորները գործադուլ սկսեցին:

Պարիզ, 12 | 25 յունւարի

Լեհաստանի ընդհանուր տրամադրութիւնը գուշակել է տալիս մեծ գործադուլ: Կարող է պատահել, որ բուն լեհական շարժում սկսւի Վարշավայում:

Բերլին, 12 | 25 յունւարի

Մոսկօվից ստացած մասնաւոր հեռագիրներ հաղորդում են, որ կարևոր դէպքեր տեղի ունեցան Ֆինլանդական մի քանի քաղաքներում:

Պարիզ, 13 | 26 յունւարի

Հ Ե Լ Ս Ի Ն Գ Փ Օ Ր Ս Ո Լ Մ 5 հազար բանւորներ գործադուլ սկսեցին:

Լիբաւա յ ու մ բանւորները դադարեցրին աշխատանքները:

Բիգա՝ ընդհանուր գործադուլ յայտարարեց: Մասնակցողների թիւը 80 հազարից աւելի է:

Վ օ վ ն օ՝ արդէն ընդհարում տեղի ունեցաւ զօրքի և բանւորների միջև:

Գ օ ր պ ա տ՝ մի քանի հազար մարդկանցից կազմած ժողովը բողոքեց կառավարութեան դէմ:

Թ է օ դ օ ս ի ա՝ մի քանի օրից ե վեր արդէն գործադուլ է յայտարարւած:

Բ է վ Ե Լ՝ բանւորները ցոյց արեցին ոստիկանութեան դէմ:

Վ ի Ե վ՝ սկսեց բանւորական գործադուլը:

Բերլին, 13 | 26 յունւարի

Պետերբուրգի քաղաքային խորհուրդը վճռեց 25 հազար ուժերի յատկացնել զոհերի ընտանիքներին: Գա համարում է յանդիմանութիւն կառավարութեան հասցէին: — Յուզումները այժմ բանւորներից և ամբօրից անցել է այլ շրջաններ: Պրօֆէսորների, գրողների, ինչպէս և փաստաբանական շրջաններում դժգոհութիւնը ծայրայեղ է: Նոյնիսկ կառավարական շատ պաշտօնեաներ բացարձակ տրտունջ են յայտնում կատարող բուռնութիւնների դէմ:

Լօնդօն, 14 | 27 յունւարի

Գններալ Տրէպօլին նշանակումը իբրև Պետերբուրգի քաղաքապետ, բացարձակ իրաւունքով, ծանր սպաւուրութիւն թողեց: Նա համարում է ընդունակ վերսկսելու Պլէվէի արարքները: Տրէպօլ՝ մեծ-իշխանների պաշտպանեալն է և լիազօրութիւն է ստացել՝ ամէն ինչ անել՝ թագաւորական տունը փրկելու համար: Հաստատուած Չմերային պալատի մէջ՝ նա փոքրիկ-ցար է մայրաքաղաքի համար: Ներքին գործերի մինիստրի իրաւունքները՝ խլած և նրան են տրւած: Տրէպօլ յայտարարեց, որ ոչ մի միջոցի առաջ կանգ չի առնի: Արդէն մի քանի հազար ձերբակալութիւններ կատարեցին: Բունւած են յայտնի գրողներ, որոնց թւում Գօրկի և Աննենսկի, պրօֆէսորներ, իմիջի այլոց՝ Կարէեվ, Հեսսեն: Մայրաքաղաքից աքսորեցին շատերը: Նոյնիսկ բարձր հասարակութեան մէջ սարսափ է տիրում: Տրէպօլին շնորհիւ՝ իշխան Սվեատօպօլկ Միրսկու դէմ նկատում է մեծ թշնամութիւն: Պալատական շրջանների կարծիքով՝ այս բոլորը Միրսկու ազատամիտ քաղաքականութեան արդիւնքն է: Մեծ-իշխանների խումբը ամէն միջոց գործ է դնում, որպէս զի ուէ զիջումն չ'անւի ժողովրդական պահանջներին: Որոնում են ներքին գործերի նոր մինիստր՝ Պլէվէի ոգով: Մեծ-իշխան Վլադիմիր սպառնացել է պալատական յեղափոխութիւն անել, եթէ Նիկօլայ Բ. թեքւի ազատամիտ ծրագիրների կողմը:

Լօնդօն, 14 | 27 յունւարի

Լրագիրների ներկայացուցիչների հաւաքած տեղեկութիւններին նայելով՝ սպանւածների և վերաւորւածների թիւը մինչև այդ օրը հասել է 4,000-ի: Կառավարութիւնը ձգտում է խաբել բանւորներին՝ ասելով, որ եթէ աշխատանքները վերսկսեն, նրանց պահանջներին գոհացում կը տրւի: Յեղափոխական ղեկավարները իրենց կողմից ձգտում են բաց անել գործաթողների աչքերը:

Պետերբուրգ, 14 | 27 յունւարի

Լուր կայ, որ կազմած է եակոբինների գաղտնի

կլուբ, մասնակցութեամբ մի քանի ականաւոր անձանց, որը նպատակ ունի հաստատել ժամանակաւոր կառավարութիւն, եթէ աջողի գլորել այժմեան ըէժիմը:

Պարիզ, 14 | 27 յունւարի

Յարսկօէ-Սէլջօլում կայացաւ խորհուրդ՝ կայսերական տան անդամների միջև: Խորհրդակցութեան ժամանակ ընդհարումներ տեղի ունեցան թագաւորի և մի քանի մեծ-իշխանների միջև: Կայսրուհին յայտնեց, որ ցանկանում է իր երեխաներին մի ապահով տեղ ուղարկել: Նիկոլայ Բ. աւելացրեց, որ ինքը հանգամանքներին նայած, կամ Լիվադիա կերթայ կամ Գանիա: Մեծ իշխաններ Վլադիմիր և Ալէքսանդր դիմադրեցին այդ մտքին և նոյնիսկ սպառնացին: Նրանց կարծիքով՝ թագաւորի հեռանալը ուժ կրտայ ժողովրդական շարժման, որ առաջ կը բերի իրենց կործանումը: Այդ պատճառով մեծ-իշխանները ակնարկեցին, որ կը դիմեն ծայրայեղ միջոցների իսկ՝ իրենց ցանկութիւնը իրաւորելու համար: Պալատական շրջաններում փսփսուկ կայ, որ Նիկոլայ Բ. կարող է սպանել նոյնիսկ մեծ-իշխանների ձեռքով, եթէ հրաժարւի նրանց կամակատարը լինելը:

Պարիզ, 14 | 27 յունւարի

Մոսկվայի մէջ ոստիկանութիւնը կպցրեց պատերին ազդեր, որոնց մէջ ասւած է, թէ ներկայ խառնակութիւնները առաջ են բերել անգլիական գործակալները, ետպօնական փողերով: Այդ զրպարտութեան նպատակն է գրգռել ռուս ամբողջը և դարձնել նրա ուշադրութիւնը դէպի այլ կողմ: Նոյնպիսի թղթեր կպցրած են մի քանի այլ քաղաքներում: Աւարշավյում անգլիական փոխ-հիւպատոսը վերաւորեց մի զինւորի ձեռքով: Անգլիական արտաքին գործերի մինիստր Լորդ Լանսդաու հեռագրով, ուղղած իրենց դեսպանին՝ Պետերբուրգ, բողոքեց ռուսաց կառավարութեան այս անօրինակ վարմունքի դէմ: Գեսպանը այդ հեռագիրը յանձնեց Պետերբուրգի կառավարութեան, աւելացնելով մի քանի սպառնալիքներ: Պետերբուրգից կարգադրութիւն ուղարկեց գաւառները՝ ոչնչացնել այդ տեսակ ծանուցումները: Գրա հետ միասին ռուսաց արտաքին գործերի մինիստրութիւնը լուր է տարածում, որ ռուսաց յեղափոխական, ազատամիտ և սօցիալիստական կուսակցութիւնները ստացել են ետպօնական կառավարութիւնից 18 միլիոն, ներքին խառնակութիւններ առաջ բերելու համար: Հասարակութիւնը այդ լուրերին կարեւորութիւն չի ընծայում:

Յելսինգֆօրս, 14 | 27 յունւարի

Չորեքշաբթի երեկոյեան, 5,000 բանւորներ մի ցոյց կազմակերպեցին: Ստիկանութիւնը յարձակում գործեց: Շատ վիրաւորւածներ կան:

Պետերբուրգ, 14 | 27 յունւարի

Նիկոլայ Բ.-ի սպանութեան լուրը ճիշդ չէ: Խնթաղութիւն կայ, որ յաջորդ կիրակի օր շարժումը կարող է վերսկսել, որովհետև յեղափոխականները աշխատում են իրենց ձեռքը առնել գործի ղեկավարութիւնը, մի հանգամանք, որ շարժման սկզբում գոյութիւն չուներ:

Լոնդօն, 14 | 27 յունւարի

Պետերբուրգի քաղաքապետ Տրէպօլ շարունակում է ձերբակալութիւնները: Լուր կայ, որ բանտարկւածների թիւը հասնում է հինգ հազարի: Չերբակալւածների մէջ կան աւելի քան 150 կանայք:

Պարիզ, 14 | 27 յունւարի

Օրեսայի ոստիկանապետը մի շրջաբերականով, ուղղած բանւորներին, յորդորում է հեռու մնալ խառնակութիւններից և վերսկսել աշխատանքը: Ստիկանապետը աւելացնում է, որ գործադուլը օգուտ է բերում միմիայն ետպօնացիներին և նրանց գաղտնի դաշնակիցներին: Քաղաքացիները կարգում են շրջաբերականը և ժպտում:

Քելն, 17 | 30 յունւարի

Վարշավայում նոր ընդհարում տեղի ունեցաւ զօրքի և գործադուլ անողների միջև: Սպանւեցին 100 հոգի, վիրաւորւածների թիւը 600-ից անցնում է: Թատրոնական հրապարակի վրայ և Վոյա թաղում զօրքը հրացանով դիմաւորեց բանւորներին: Չերբակալւած են մօտ 900 հոգի:

Սարատով, 17 | 30 յունւարի

Շաբաթ օր, Սարատովի գիմնագիտի և ըէալական դպրոցի աշակերտները հրաժարեցին ներկայ լինել դասերին: Եւ երբ նրանք հեռանում էին դպրոցից, կօզակները նրանց շրջապատեցին և սկսեցին մտրակներով ծեծել: Քաղաքացիները անմիջապէս ժողով գումարեցին և բողոքեցին նահանգապետին՝ պահանջելով, որ աւելի մարդավարի կերպով վարեն երեխաների հետ:

Թիֆլիս, 18 | 31 յունւարի

Թիֆլիսում այսօր գործադուլ յայտարարեց: Տպարանները չեն բանում:

Լոնդօն, 18 | 31 յունւարի

Վիտտէ յայտնեց եւրոպական թղթակիցներից մէկին, որ ինքը ոչինչ տեղեկութիւն չունի օրւայ կարգադրութիւններից և մինիստրների խորհուրդ տեղի չէ ունեցել: Գա համարում է ակնարկ այն հանգամանքի, որ այժմ գործերի ամբողջ ղեկը գտնւում է պալատական խմբի և Տրէպօլի ձեռքում: Սպասում են, որ ցարի կառավարութիւնը՝ իր խախտած դիրքը ամրացնելու համար՝ կը դիմէ ծայրայեղ խտութիւնների: Կայսրը միշտ սարսափի մէջ է պահւում և նրան ստորագրել են տալիս բոլոր թղթերը: Օբօլենսկուն առաջարկեցին ընդունել Միսկոպաշտօնը: Տիրապետող կարծիքը այն է, որ ցարիզմի գոյութիւնը վերջնականապէս վտանգւած է: Սպասում են մի քանի կարևոր տէնօրներ:

Պետերբուրգ, 18 | 31 յունւարի

Կառավարչական շրջաններում ահագին տպաւորութիւն է թողնում այն վիթխարի համակրութիւնը, որ ամբողջ Եւրոպան ցոյց է տալիս յեղափոխական շարժման, և այն խորին ատելութիւնը, որի առարկան է միապետութիւնը: Եւրոպական զանազան քաղաքներում կազմուող միտինգների մասին ռուսաց դեսպանները մանրամասնօրէն հաղորդադրում են մինիստրութեան: Այդ հանգամանքը ստանում է առանձին կարեւորութիւն մանաւանդ այն պատճառով, որ բողոքը մամուլից և հասարակութիւնից անցնում է պաշտօնական շրջանները — պարլամենտներն ու քաղաքային խորհուրդները: Կառավարութիւնը ամէն ջանք գործ է դնում, որ լուրերը չլիստանան Կուրօպակիսի զօրաբանակի մէջ, որ առանց այն էլ Լքւած է և հաւատը կորցրած: